



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՆԴԵՍԻՈՅ ՍՈՍԿԱԼԻ ԴԵՊՐԸ

ԵՒ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՆԴԵՍԻՈՅ



ԴԵՆՅ

ՆԴԵՍԻՈՅԻ ՀՅՑ ՄԸ



ՏՊԱՐԱՆ ԹՎԱԲՏԱՐԱՆՆԵԱՆ

ՀՈՒՄԱՆ, ՊՈԼԻՏԱՐԱՆ

1904

9(47.925)

Ե-16

9 (47.925)

Ե-16


19 AUG 2011

19 AUG 2006

ԵՂԵՍԻՈՅ ՍՈՍԿԱԼԻ ԴԵՊՔԸ

ԵՒ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԿՈՏՈՐԱԾԻՆ ԵՂԵՍԻՈՅ



Գրեց

ԵՂԵՍԻՈՅԻ ՀԱՅ ՍԸ

Verlag  
WATZAHAYAN  
SOLUNA (Luzern)  
1904



ՏՊԱՐԱՆ Յ. ԱԻԵՏԱՐԱՆԵԱՆ

ՇՈՒՄԱ, ՊՈՒԿԱՐԻԱ

1904

05 APR 2013

X.S/5



6748-43

Verlag Orientalischer Schriften  
P. JOH. AWETARANIAN  
SCHUMLA (Bulgarien)  
1904



THE WHITE WALLS OF URFÂ. THE LARGE BUILDING TO RIGHT OF CENTRE IS THE GREGORIAN CHURCH, THE FOUNDATION OF WHICH IS SUPPOSED TO HAVE BEEN LAID BY THADDEUS, ONE OF THE SEVENTY DISCIPLES. IT WAS IN THIS CHURCH THAT 2,500 ARMENIANS WERE MASSACRED, A SCENE WITNESSED BY MISS SHATTUCK.

### ԵՂԵՍԻՈՅ ՄՈՍԿԱԼԻ ԴԵՊՐՈ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԼԻ 1895ԻՆ :



Այս գրեյկին հեղինակը, Կարապետ Քիլեհեան իր ընտանիքին հետ

Այս սրտաճմլիկ տխուր դեպքի նկարագրութիւնը՝ որ տեղի ունեցեր է 1895ին յԵդեսիայ՝ ընթերցողաց ուշադրութեան առջեւ դնելէ առաջ, պատշաճ համարուեցաւ երկու խօսք ալ Եդեսիոյ անցեալին վրայ ըսել:

Նախ, այն կարծիքը թէ, Եդեսիայ Հայր Աբրահամու ծննդավայրն ու հայրենիքն է, հետեւեալ կարեւոր հետազոտութեանց նայելով կ'երեւի որ իրողութեան չի համապատասխաներ: Ա. Ապրամու Քաղղէացոց Ուր\* քաղաքէն ի խառան գաղթելը, տես Մննդ. ԺԱ. 28, 31: ԺԵ. 7: Նէեմ Թ. 7: (Գրաբար թարգմանութեան մէջ Ուր բառը մերթ աշխարհ եւ մերթ երկիր թարգմանուած է:) Բ. Ամբողջ Միջագետքի մէջ Ուր անունով քաղաք մը չի գտնուելը եւ Ուր բառը հոն գտնուող Օրհոյ—էրէզ անուններու հետ փոխելը ուղիղ չ'ըլլալը, Գ. Բաբելոնի երկրին մէջ (որ է իսկական Քաղղէա) Արարական Եփրատի աջ կողմը, Շաղ—իւլ—Հէյի եւ Եփրատի միաւորուած տեղին մօտ, Ուր անունով նշանաւոր քաղաք մը ըլլալը, որն որ ասկէ երկար ժամանակ առաջ Սըր Հէնրի Նավլինսըն Էլ—Մուգայէրի (Յե—Քեղէն պարսկերէն) աւերակներուն մէջ զբառնուած փորագրեալ աղիւսներու եւ քարերու օգնութեամբը երեւան հանեց: Դ. Աբրահամու առաջի անունը Ապրամ, ըստ արտասանութեան Ապուրամ, Բաբելոնական Ասորերէն ըլլալը, եւ Ե. Դարձեալ միայն Էլ—Մուգայէր գտնուող վաղեմի թագաւորաց

\* Քաղղէացոց Ուրի վրայ ծանօթութիւն տուող աղբիւրները ասոնք են. W. K. Loftus, „Chaldaeia and Susiana,“ London 1857, S. 126. ff.; Schrader, die Abstammung der Chaldäer und die Ursitze der Semiten. in ZDMG. XXVII, S. 397 ff.; derselbe, Semitismus u. Babylonismus in Jahrb. f. protest. Theol. I (1875) S. 117 ff.; KGF. 94 ff.; Kat. 2 129 ff.; 134. 145; Fr. Delitzsch, Parad. 226 f.; Fr. Hommel, Gesch. „Babyloniens-Assyriens,“ 212 ff.; C. P. Tiele, „Babyl.-Assyr.“ Gesch. 85; H. Winckler, Gesch. „Babyloniens u. Assyriens“ (1892), S. 25. Schr.

արձանագրութեան մէջ երանքի սուրբ սեպուիլը եւ Աբրահամին իւր ծառային երանքի վերայ երդուիլ տալը : Տես, Ծննդ. ԻԴ. 2 : Այս բոլորը կը հաստատեն որ Աբրահամի ծննդավայրը եւ հայրենիքը եղող Ուրը Բաբելոնական Քաղաքէայի մէջ է եղեր եւ ո՛չ թէ Միջագետքի մէջ, ուր կը գտնուին թէ՛ Եդեսիան (Ուրֆ) եւ թէ՛ Աբրահամի գաղթած Խառանը իրարու մօտ : Բայց Եդեսիայ, որ հին ժամանակները Հիւսիսային Միջագետքի Օսրոյէնէ գաւառը կը կոչուէր, կը գտնուի Խառանի հիւսիսային արեւմտեան՝ եւ Եփրատ գետի ափը գտնուող Պէրէճիկի արեւելեան կողմը, Խառանէն մօտաւորապէս մի օրուայ ճանապարհ հեռու եւ այժմ կը կոչուի Ուրֆա կամ Ուռհա : Աւանդութիւնը կ'ըսէ թէ այս քաղաքը Ներքովթը շինեց. սակայն ստոյգ աղբիւրները միայն հետեւեալ տեղեկութիւնը կու տան .

«Մէլոյքոս, Մեծն Աղեքսանդրի զօրապետը, որ (Ն. ք. դ. ք. 312) իշխեց Ասորեստանի վրայ, այս քաղաքը վերստին շինելով Մակեդոնական քաղաքի մը անունով Էտէսսա կոչեց : Կ'ըսուի թէ այն ժամանակը այս քաղաքը կը կրէր Քալիբրհօէ անունը : Մէլոյքոսի յաջորդներէն Անտիոքոսի օրովը, որոյ անունով Եդեսիայ Անտիոք ալ կոչուեցաւ, Օրհոյ-Պար-Եէհէվիէ (Ն. ք. դ. ք. 137) հաստատեց Եդեսիական թագաւորութիւնը, որ կը կոչուէր նաեւ Օսրոյէնական կամ Օրհոյէնական պետութիւն : Օրհոյի յաջորդները կը կրէին իբրեւ պատուոյ տիտղոս «Ապքար» անունը, որոնք Պարթեւաց Հռովմայեցւոց դէմ ունեցած պատերազմի պատճառով իրենց դէպի Հռովմայեցւոց ունեցած հաւատարմութիւնը դրժելով շատ անգամ թշնամութեամբ վարուեցան, մանաւանդ Ապքար Ուխտօ (Ապար Մ), մինչեւ Կայսր Թրայանի օրովը Լուսիոս Գուլտոս նուաճելով Հռովմայեցւոց անհաւատարիմ զրտնուող Եդեսիան հարկատու ըրաւ, բայց Կայսր Հատրիան դարձեալ սոյն թագաւորութիւնը վերականգնելով հարկատուութիւնը շնորհեց անոր, մինակ թէ Հռովմայեցւոց գերիշխանութեան տակն էր : Յամի Տեառն 216ին Եդեսիայ եղաւ Հռովմայեցւոց բանակատեղին (Colonia Marcia Edessentum) : 217ին Քարակալլա հոն սպաննուեցաւ : 243ին Կորախանոս դարձեալ Ապքար մը կարգեց սոյն թագաւորութեան վրայ : 260ին Եդեսիայ Սափորէս Առաջինի ձեռքով Պարսիկներէն պաշարուեցաւ եւ Կայսր Պալերեան քաղաքի

Տրայան  
211  
98-  
117

դռներուն մէջտեղը զարնուեցաւ : Եդեսիայ, թէ՛ այս ժամանակ եւ թէ՛ մանաւանդ երբոր Հռովմայեցւոց կայսրութիւնը բաժնուելով Հռովմէական արեւելեան պետութեան անցաւ, Քրիստոնէական պատմութեան մէջ խիստ նշանանաւոր տեղ բռնեց : Կ'ըսուի թէ առաւել քան 300 վանքեր կը գտնուէին իւր պարիսպներուն մէջը, բաց ի Էփրայիմ Սիւրոսի վանքէն եւ անոր դպրոցէն :

Եդեսիայ Արիոսական, Միադաւանական եւ Նեստորական վէճերու մէջ մեծ դեր կատարեց : 525ին Կայսր Յուստինիան Ա. Եդեսիոյ պարիսպը վերստին նորոգելով զայն Յուստինուպոլիս անուանեց : Անգամ մ'ալ Խոսրով Նուշիրէվան պաշարեց Եդեսիան, բայց առանց մի արդիւնք ունենալու : Երբ Մուհամմէտա կանութիւնը, որ Արաբ Խալիֆներու միջոցով կը տարածուէր, 641ին հասաւ Եդեսիայ, վերջ տուաւ անոր Քրիստոնէութեան յառաջդիմութեանը, եւ Խալիֆներու ներքին եւ արտաքին հակառակութեանց պատճառով ալ Եդեսիա կորսնցուց նաեւ իւր աշխարհային փայլը, մինչեւ որ 1040ին Սելճուքներու ձեռքն անցաւ :

Թէեւ Բիւղանդեան կայսրները յաջողեցան կրկին Եդեսիան դրաւել բայց իրենց հոն խրկած կառավարիչը ինքզինքը անկախ ընելով անոնց ձեռքէն ելաւ : Սակայն այս կառավարիչը շատ նեղութիւն կը կրէր դրացի Թուրքերէն, նամանաւանդ Էմիր Պալատուքէն : Առաջին խաչակրաց ժամանակը Պուլեօնցի Կոթֆրիտի եղբայրը Կոմս Պալտուին եւ անոր յաջորդները Եդեսիոյ վրայ իշխելով եւ Սամաթիա եւ Սարուճ նահանգներն ալ անոր վրայ աւելցնելով զայն կոմսական մայրաքաղաք ըրին : Այս կոմսական իշխանութիւնը Երուսաղէմի պարիսպներու նման իբրեւ Ֆիրէնիկ իշխանութիւն կէս դար Թուրքերու դէմ կեցաւ, մինչեւ որ Կոմս Սօստէլին Երկրորդի օրովը Մուսուլի վրայ իշխող Էմատէտին Զէնկի (1144ին) քաղաքի բերդին վրայ բուն յարձակում բերելով առաւ զայն եւ հաղարաւոր մարդիկ սուրէ անցուց եւ դարձեալ սկսեց Իսլամական իշխանութիւնը : Յետոյ այն փորձը, որ 1146ին Թուրքական լուծի տակէն ազատուելու համար ի դործ դրուեցաւ, պատճաւ եղաւ քաղաքին կործանման եւ սոսկալի արիւնհեղութեան : Կ'ըսուի թէ այն ժամանակ գրեթէ 30,000 Քրիստոնեայք սուրի բերնէն անցան :

Դարերու ընթացքին, քաղաքական պարագաներու համեմատ

Եղեխիան երբեմն կ'իջնար Եգիպտացւոց Սուլթաններու իշխանութեան տակ, երբեմն Ասորիներու եւ երբեմն ուրիշներու : Զօրօրինակ, 1182ին Ասորոց ձեռքն ինկաւ, 1234ին Հռովմայեցւոց, 1391ին Մոնկոլներու (երբ Լէնկթիմուր Թաթարները եւ Պարսիկները հոն բերաւ), 1637ին նորէն Թուրքերու ձեռքն անցնելով սկսեց կրկին ծաղկիլ մինչեւ այսօր »

1899ին վերջերն էր, երբ Ուրհայէն կ'անցնէի մի Հայ այս, ԵԴԵՍԻՈՅ ՍՈՍԿԱԼԻ ԴԵՊՐԷ, գրուածքը ինձ յանձնեց եւ իւր կեանքի վախէն ինձմէ խնդրեց որ, երբ այս գրուածքը տպելու ըլլամ, իր անունը չի գրեմ : Ես չեմ կրնար մոռանալ անոր արտասուած լից դէմքը, նամանաւանդ երբոր կը յիշէր իւր եղբայրներու չաւրչար սպաննուիլը : Մենք այս գրուածքը տպեցինք առանց սրբազրելու եւ փոփոխելու անոր գրածը, քանզի աւելի լաւ համարեցինք խոցոտեալ սիրտ ունեցող անձի մը գրիչէն ելածը, եթէ քերականական եւ այլ սխալներ ալ լինի, իւր եղածին պէս ի լոյս հանել, քան թէ այդ ճգնաժամի մէջ չի գտնուող հանդիստ սիրտ ունեցող անձի մը քերականական գրիչովը եւ բարձր ոճովը գայն սրբազրել եւ զարդարել տալ : Ընթերցողները ասիկայ կարգալով պիտի իմանան թէ իրենց հաւատոյ եղբայրները ի՞նչեր են քաշեր : Տա՛յ Տէրը որ ասիկայ պատճառ ըլլայ շատերուն սիրտը արթնցնելու եւ տառապելոց օգնութեան համար առ Բարձրեալն Աստուած դիմելու :

Աւելորդ չի համարուի յիշել որ այս դէպքի ժամանակ Եղեխիոյ մէջ 12,000ի չափ Հայեր սպաննուեր էին : Դէպքէն յետոյ Դերմանական-արեւել-առաքելական Ընկերութիւնը ի սէր Քրիստոնէութեան հաստատեց հոն որբանոց մը, ուր առաւել քան 500 որբեր խնամելով կու տայ անոնց Քրիստոնէական դաստիարակութիւն իրենց մայրենի եկեղեցւոյ ծոցը եւ կը սորվեցնէ ուսում եւ արհեստ : Դարձեալ հաստատեր է հոն գորգի գործարան մը, ուր 300ի չափ այրի կիներ սոյն հաստատութեան հովանաւորութեան տակ կը գտնեն գործ եւ ապրուստ : Վերջապէս հաստատեր է զարձեալ միեւնոյն ընկերութիւնը համազգային հիւանդանոց մը, ուր կը զարմանուին ամէն ազգէ հիւանդներ, մինչդեռ առաջին երկու հաստատութիւնները միայն թշուառ մնացած Հայերու ցաւը քստ կարի մեղմացնելու համար են :

1904 Յուլիս 16 :  
Նումլա (Պուլկարիա)

ԱԻԵՏԱՐԱՆԵԱՆ

## ԵԴԵՍԻՈՅ ՍՈՍԿԱԼԻ ԴԵՊՐԷ

1895 Հոկտեմբեր 14, Շարաթ օրը, Հայերը ամենայն հանգարտութեամբ իրենց առեւտրական եւ աշխատութեան հաշիւները կարգադրած մինչեւ իսկ իրենց կառավարական տուրքերը վճարած շուկայէն կը մեկնին դէպ ի երենց տունները : Յաջորդ օրը Հոկտեմբեր 15, Կիրակի ժամը 5-7ի առեւտները, եօթը հատ զինեալ Թուրք երիտասարդներ Հայ հասարակութեան կեդրոնն եղող եկեղեցւոյ շուրջը դռնուած թաղերը կը պատին եւ Սառաֆ Պողոսի տունն երթալով գայն անդ չեն գտներ : Յետոյ Չաթալ Մէյտանիի կից փողոցը յիշեալ Պողոսին հանդիպելով անմիջապէս դաշուսի հարուածներով շնչասպառ կը ձգեն : Օրը Կիրակի ըլլալուն փողոցները Հայ անցորդներով լեցուն էր, եւ որովհետեւ ոճիրը թագուն պահել անկարելի էր, Հայ երիտասարդներէն ոմանք անմիջապէս ոճրագործը միայն իր երկու ընկերներովը միասին ձերբակալած եկեղեցւոյ դրան ֆօլիանէին կը յանձնեն : Թէեւ Ժանաբօմները ոճրագործին ֆօլիանէի պատուհանէն խոյս տալու պատեհութիւն կուտան, սակայն Հայ երիտասարդներէն ոմանք դարձեալ գայն ձերբակալած նոյն ֆօլիանէին կը յանձնեն : Ժանաբօմները ոճրագործէն նախապէս առած դաշուսով ֆօլիանէի խորշին մէջ գայն ծանրապէս կը վերաւորեն որ յետոյ Հայոց կողմէ վերաւորուած հրատարակեն : Ինչպէս որ ալ եղաւ :

Այս խառնակութեանց առթիւ եւ նոյն միջոցին եղած աղմուկներուն պատճառաւ թէ եկեղեցւոյ գաւիթը դռնուող անձինքներէ շատեր եւ թէ անցորդներէ ոմանք կը խնուին ֆօլիանէի շուրջը սոսկ հանդիսատես լինելու եւ ոչ թէ յարձակում տալու : Բայց Ժանաբօմները անոնց կը զայրանային ըսելով « Ի՞նչ է այս բազմութիւնը, ի՞նչ է այս յարձակումը » Այս կերպով առնոնք աւելի զրգուրթիւններ հանելու նպատակաւ Հայոց վերայ ամեն կերպ զրպարտութիւններ կը հնարէին : Ճիշդ սոյն իւրարանցման պահուն պաշտօնանկ Պէնպաշէ Հասան Պէյը քանի մը

զօրքերով եկաւ եւ ոճրագործը ողջամբ նօրա երկու ընկերներ-  
քովը կառավարութեան տարաւ: Ասոր վրայ խանուած բազմու-  
թիւնը անմիջապէս ցրուեցաւ:

Քիչ վերջը լուր անուեցաւ թէ նոյն ոճրագործը կառավա-  
րութեան պալատը հասածին պէս մեակեր է: Զինուորական բժիշ-  
կը արդէն Սառաֆ Պօղոսին վրայ դիտողնութիւն կատարելով ա-  
նոր դաշուների հինգ հարուածներով շնչասպառ լինելը հաստատող  
բժիշկը գրած էր, ինչպէս նաեւ ոճրագործին դաշուների հարուա-  
ծով մեռնիլը: Յետոյ լուր անուեցաւ թէ կառավարութիւնը ըստ  
Լանդարմայից զրպարտական վկայութեանց սապէս արձանագրելով  
վճիռ արձակած է թէ. «Հայք մեծ բազմութեամբ քօլօնների վերայ  
յարձակած եւ ոճրագործը վիրաւորելով սպաննած են», Բայց  
ինչպէս որ բացայայտ անսնուեցաւ, Հայք ո՛չ քօլօնների յար-  
ձակում տուած եւ ո՛չ ոճրագործը վիրաւորած կամ սպաննած  
էին: Իսկ գալով քօլօնների շուրջը կամ մօտը Հայերու խանութիւր  
երեք գլխաւոր պատճառներէ ասալ եկած էր: Առաջին. Աւուր  
կերակի ըլլալը, Երկրորդ. Տեղին եկեղեցւոյ դուռը ըլլալը եւ  
Երրորդ. Ժամանակին կէսօր ըլլալը: Ահա այս զուգադիպու-  
թիւնը արտակարգ հանդիսատես ամբոխի մը խոնուելուն տեղի  
տուաւ եւ ոչ թէ յարձակողութիւնը: Բայց ափսոս որ ճշմար-  
տութիւնը Թրքական կառավարութեան ասջեւ յարգ չ'ունի, քա-  
նի որ ստութիւնը եւ գրպարտութիւնը միշտ բարձրագլուխ կը  
պարծին:

Այս եղելութեանց վերայ անմիջապէս Ազգային Երեսփո-  
խանական ժողով կազմուեցաւ ուր ներկայ գտնուեցաւ Հայ-Բու-  
ղոքական հասարակութեան կողմէ Ապուհայաթեան Յակոբ Պատ-  
ուելի Հայրը նաեւ Հայ-Կաթոլիկ հասարակութեան կողմէ Սապ-  
պաղ Սարգիս Էֆէնտին, եւ միատեղ խորհրդակցելով Բաբելոն գրե-  
ցին կառավարութեան եւ անոր հզօր պաշտպանութիւնը եւ հա-  
սարակաց անգործութեան ապահովութիւնը խնդրեցին: Ասոր վրայ  
կառավարութիւնը կատարեալ վստահութիւն տալով հրաման ը-  
բաւ որ ասանց որ եւ իցէ բանէ մը վախնալու վաղը, Երկուշաբ-  
թի օր, իւրաքանչիւր օր իրենց սովորական գործին երթան:

Միւլեաբը շատան Էֆէնտին, որ գատուորը իրեն փոխա-  
նօրը կարգելով Բաբելոնի համար Սուրուճի դաշտին գերդերը  
գացած էր, քաղաք հրախրելու համար ահա կառավարութեան  
կողմէ երեք ձիաւորներ ճամբայ ելան իրենց հետ տանելով պաշ-  
տօնակիան գրութիւններ եւ Ազգային ժողովոյ կողմէ խնդրագրեր  
նամակներ:

Սուրուճի դաշտը հասարակ ճանապարհորդաց համար քաղա-  
քէն 8-9 ժամ հեռաւորութիւն ունի, իսկ աճապարանօք ձիով

գնացողը 5-6 ժամէն կը հասնի: Ուստի այս վերջին հաշուով Միւ-  
թէսաբըրքին վաղն առաւօտ քաղաքս մտնելը լի յուսով կ'ակն-  
կալուէր: Սահայն ընդ հակառակն 3-4 օր ետքը եկաւ որ ար-  
դէն ըլլալէքը եղած էր եւ այս յապաղումէն արդէն շատ բան  
կը հասկցուի:

Հոկտեմբեր 16, Երկուշաբթի առաւօտ, Հայք ըստ հրամա-  
նացն կառավարութեան սկսեցին շուկայ իջնել իրենց սովորա-  
կան գործերով գրադելու համար, մինչդեռ շուկայի բոլոր անց-  
քերը պաշարուած էին զինեալ Թուրքերով: Իսկոյն շուկայ մըտ-  
նող Հայերէն ոմանց թեւը, ոմանց գլուխը կոտորելով եւ զու-  
մանս գանակոծելով կը հալածէին: Մոյն հարուածեալ եւ հալա-  
ծեալ Հայեր անմիջապէս Ազգային Առաջնորդարան գալով խնդ-  
րարկեցին, եւ ապա Հայք այլեւս շուկայ չ'իջան: Ասոր վրայ դար-  
ձեալ Ազգային ժողով կազմուեցաւ եւ եղած դէպքերը Բաբելոն  
մը կառավարութեան հաղորդեցին եւ անոր հզօր պաշտպանու-  
թիւնը խնդրեցին: Բայց դեռ պատասխան մը չ'առած ահա ժամը  
Յի ատենները Թուրք հասարակութիւնը գրգռեցաւ եւ մեծամեծ  
խումբերով սկսան կառավարական պալատը շրջապատելով Հայը  
ամբաստանող բողոքագրի բողոքագրի յաջորդեցնել: Մին թէ.  
«Ահա Հայք Մեծ Մզկիթը յարձակում տալով 1,500 Թիւրք ջար-  
դեցին»: Մին թէ. «Ահա Հայք Սըբուհի միթեանոցը թալլեցին»: «  
Միւսը թէ. «Հայք Հայ թաղերու մէջ բնակող Թուրքերը եւ Զա-  
Էլեհները ջարդեցին, եւն»: «Ահա այս կարգի 72ի չափ ստայօր  
բողոքագրեր եւ ամբաստանագրեր կը տեղան, որոնց մէջ՝ ամիւշ  
նէն աւելի գիշերապահ զօրաց բողոքագրերը մեծ կարեւորութիւն  
ստացաւ: Որք կ'ամբաստանէին թէ. «Այս գիշեր մինչ իրենք Հայ  
թաղը պահպանելու համար կը պտտէին, ահա Հայոց ապստամ-  
բախումբերը իրենց դէմն ելլելով զիրենք ցրուելու եւ հալածե-  
լու փորձեր ընելու յանդիմնելուն համար իրենք ալ ստիպուէր են  
հրազինուց պայթումներով անոնց յառաջխաղացութիւնը դիմա-  
գրաւել»: Հրազինուց պայթման տեղի ունենալը ստոյգ է,  
բայց բողոքագրի ներկայացուցածին պէս տեղի ունեցած չէ,  
վասն զի ստապատիւր բաներ են: Գիշերապահ զինուորը նոյն գի-  
շեր իրենց մէջը կատակներ հնարելով իրենցմէ մաս մը Հայ կը  
ձեւանան եւ կ'սկսին Հայ անուններ եւ բառեր թոթոյնել եւ աղ-  
մուկներ բարձրացնելով հրազէններ կը պայթեցնեն: Այս բաները  
որ ըրին յատուկ Հայերը զրպարտելու դիտաւորութեամբ էին:  
Ինչպէս որ այս սուտ ամբաստանութիւնը յատենի կառավարու-  
թեան իբր ճշմարտութիւն յարգուեցաւ: Հետեւաբար կառավար-  
ութիւնը ասանց քննելու եւ ճշմարիտը երեւան հանել աշխա-  
տելու ամիւն զրպարտութեանց հաւատալով եւ ողի ի բոլին Հայոց



դէմ զայրանալով զանոնք նուաճելու համար հրաման կ'ընէ որ բեռնակները ի զէն կոչուին եւ Հայոց գիմարդներն : Թուրքերը այս փափաքելի եւ ուրախառիթ հրամանն առնելուն պէս մուսուտիկներ կ'սկսին հրապարակները եւ շուկաները պոռալ թէ . « Հայ ջարդելու համար ամեն բեռնակ եղող շուտով կառավարութեան պալատը թող երթայ եւ լաթ հագնելով զէնք վերցնէ : » Ահա այս աւետիսը քաղաքը թնկացուց, որոյ հետ Թուրքաց սրտերը : Հազարաւոր Թուրքեր մեծ ոտուսներով պալատը գացին մինչեւ իսկ բեռնակ չ'եղողներն ալ : Ահա ժամը 4ին այդ անարկու բազմութիւնը յարձակեցաւ Հայ թաղին վրայ : Հաճի Գարսա աղա կոչուած գամբուր Թուրք քաշած պալատի առջեւ « Էլալա » ներ կ'աղաղակէ եւ ամբոյսը կը խրախուսէ ըսելով . « Օ'ն , փութացէ՛ք , Մուհամմէտի « Էլալա » կանչեցէ՛ք . այս օրը մեր պապերը երազեցին բայց չի կրցան վայելել : Հագար երանի՛ մեզ որ ձեռք ձգեցինք : » Ահա այսպէս յարձակելով Հայ թաղը պաշարեցին եւ կ'ուղէին խուռն բազմութեամբ թաղին տասը կիրճերէն ներս խուռն : Ա. Հայր Աբրահամու Մզկիթի առջեւէն , Բ. Քիւրքճեան եւ Կէնճ Վանէսեան փողոցէն , Գ. Մահտեսի Իմրդեան Մահտեսի Գէորգի փողոցէն , Դ. Սր. Մինասի փողոցէն , Ե. Պուչագճի Մէլատանիէն , Զ. Գարսա Գապճի Օղլու Իսմայիլ աղայի փողոցէն , Է. Մասմանայի Գաթթէլի փողոցէն Ը. Սու մէլտանիի փողոցէն , Թ. Սամաթու Դոան փողոցէն եւ Ժ. Թըլֆըտուրի բլուրէն :

Վերոյիշեալ թաղերու ծայրերը բնակող Հայք տեսնելով այս յարձակումները անմիջապէս թաղին կեդրոնն անցան եւ բաց դռները գոցելով ամրացան : Ըստ որում Հայերը բաւական զէնք ունէին եւ իրենց թաղի բարձր գերքն ալ իրենց կ'օգնէր , հետեւաբար արխապէս գիմարդեցին : Թուրքերը 3-4 ժամ որչափ որ ջանացին չի կարողացան ներս մտնել : Այս յաղթահարութիւնը աւելի Ժանաբաճից վրայ սուղի նստելով՝ մի մեծ բազմութեան աւաջորդելով զէպ ի Թըլֆըտուրի բլուրը ելան որ Հայ թաղի ամենաբարձր եւ բաց կողմն է : Նախապէս Ժանաբաճները թաղէն ներս մտան եւ Հայք երբ գանոնք տեսան տէրութեան զօրք ըլլանին ճանչնալով յարդեցին եւ ետ քաշուեցան եւ մահաւանդ հանգիստ ըրին կարծելով թէ պահպանութեան համար ներս մտած են : Բայց չէ՛ , չէ : Հայերը անմիջապէս հասկցան իրենց չարաչար սխալիլը : Վասն զի Ժանաբաճները ոչ թէ Հայք պաշտպանելու եկած էին , այլ ընդ հակառակն զայն հարուածելով Թուրք յարձակողաց յառաջխաղացութիւնը դիւրացնելով անոնց օգնելու նպատակաւ : Ժանաբաճ զաւաշը , Տիշիզըրըզ Հաճի Մուհամմէտը , Մարթինի հրացանը ի ձեռին բարձր տեղ մը ելլելով մէկ կողմէն անսած Հայը կը զարնէր եւ մըսս կողմէն կը

պոռար . « Ա՛հ , լ՛հ , զա՛ պէ՛ , զա՛ հէրբէ՛ , զա՛ վէկերբէ՛ » (Այսինքն . Ծօ՛ , ծօ՛ , շուս գացէ՛ք եւ շուս դարձէ՛ք ) : Ասոր վրայ Թուրքերը յարդեցան թաղին ծայրերը գանուած տունները թալլել եւ 200ի չափ Հայ ջարդել . բայց աւելի յառաջ քալելու չի համարձակեցան : Ուստի յետ գանալով շուկային վրայ քաղեցին եւ սկսան Հայոց եւ թէ այլ Քրիստոնէից խանութները կացիներով խորտակելով կողոպտել : Այսպէս 5-6 ժամու մէջ 1,000ի չափ խանութներ աւարի հարկանելով 100 հազարաւոր լիբաներ յօգս ցնդեցան , մինչեւ վաճառականաց եւ խանութպաններու մուրհակները եւ ամեն կերպ հաշուետոմարները եւ արհեստաւորաց ամենաչնչին գործիքները : Տարածնին տարին , չի տարածնին ջարդ ու փշուրըրին . որովհետեւ Թուրք Ֆեռաճներու եւ խառվարարներու սկզբունքն այն է թէ ոչ միայն Հայը ներկայ ունեցածէն զրկել այլ անոր ապագան եւս վտանգել , առնը աւրել առանց շինելու միջոց մը թողելու . որպէս զի թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս ամենայնիւ տկարանալով սարուկ կեանքէն չի բաժնուի :

Հոկտեմբեր 17, Երեքշաբթի օրը , ցերեկին Գալապոյին ըսուած թաղէն եղած բարբարոսական յարձակումներ թէեւ վստացին բայց մինչեւ երեկոյ չի յաջողեցան Հայ թաղը մտնել : Նոյնպէս այս գիշեր ժամը Ձէն մինչեւ ժամը 6 կամ 7 տեղի ունեցած յարձակումը միայն հրազինուց պայթումներով անցաւ :

Հոկտեմբեր 18, Չորեքշաբթի օրը , դարձեալ Գալապոյինէն յարձակում կար , բայց բան մը ընել չի յաջողեցան : Այս օրը Հին Գաթթէլի , Թըլֆըտուրի եւ Թէմրի թաղերու Հայերը թրքացնելու համար բեռնակները նոյն թաղերը պատելով իբր մուսուտիկ կը կանչեն թէ . « Ո՛վ որ Թուրքանայ իւր կեանքը , պատիւը եւ ունեցած ինչքը ապահոված կ'ըլլայ . ապա թէ ոչ , պա՛ր պա՛ր , եւ ճալը ետըս » պիտի ըլլայ : Ահա այս է թագաւորին հրամանը : Այսպէս ըսելով նոյն թաղի ամբողջ Հայոց մեծին եւ պզտիկին գլուխը ճերմակ փաթթած թէ բըլլան եւ թէ « Էրա » կը տանէին : Եթէ ընդգիմացող Հայ մը գանուէր բեռնակները իսկոյն Մարթինի հրացանը նորս կուրծքին ուղղելով կ'սպաննային թէ . « Եթէ չի Թուրքանաս , անա կը զարնեմ » : Ասոր վրայ իսկ ճ Հայերը ստիպեալ կը խոնարհէին : Պարագրեալ Հայերը մինչեւ երեկոյ անսուաղ սպասցնելէ վերջ իրիկունը իւրաքանչիւրը յետս դարձուցին անոնց թրքական անուաններ յատկացնելով : Այս եղանակաւ թրքացողաց թիւը 1,500ի հասաւ : Նոյնպէս Հոկտեմբեր 19, Հինգշաբթի օրը , թրքականութիւնը յառաջանալով հասաւ մինչեւ Պուչագճի Մէլտանը եւ անոնք որ թրքացան իրենց տանիքներուն վրայ մէյմէկ ճերմակ դրօշակներ բարձրացուցին : Ահա այսպէս հարիւրաւոր ճերմակ դրօշակներ սկսան ծածանել Հայոց

տանիքներու վրայ : Միջոց մը ետքը այս թրջացողներէն շատերը թրջականութեան մէջ հաստատ մնացին , իսկ մնացողներէն հետզհետէ վար առին գլուխնուն ձերմակը բայց ոչ դրոշակը որ մինչև երկրորդ ջարդին կը կենար : Հայոց թագը գանուող բեռնները իրենց մերձակայ բոլոր Հայ տունները կը կողոպտէին թէ ստակ թէ համազամ կերակուրներ եւ թէ կանանց զարգեր : Նէնչէրիի պէս բանի կ'առնէին նեղութիւն տալով :

Հոկտեմբեր 19, Հինգշաբթի օրը, կառավարութիւնը մասնաւոր ժողով կազմեց, ուր Մխիթարեան Խորէն Եպիսկոպոսն ալ հրաւիրմամբ ներկայ գտնուեցաւ ժողովին, եւ հասարակաց անդորրութեան խնդրագիրն ձեռք անուելով որոշուեցաւ որ . Ա. Երկու կողմէն, այսինքն Հայերէն եւ Թուրքերէն ղէնքերը ժողովել, Բ. Երկու թնդանօթներ, մին Բերդը եւ միւսը Պաշ Գուլլէն դնել, եւ ի պահանջել հարկին առանց աղբի խորութեան ապրտամբ կողմը ոմբակոծել, Գ. Այս որոշումները ժողովրդոց ծանուցանել : Իսկոյն այս որոշումները կատարուեցան : Գալով առաջին խնդրոյն, Հայք կառավարութեան պատասխանեցին թէ իրենք Մարթինի ղէնք չ'ունին եւ ոչ ալ պահանջուածին չափ հասարակ ղէնք : Նաեւ առաջարկեցին թէ իրենք ամենայնիւ Օսմանեան կառավարութեան հաղանդ են եւ անոր հրամանները յարգելու պատրաստ . սակայն ըստ որում Թուրքերը յարձակողական են անոր համար չեն համարձակելը առաջին անգամ ղէնքնկէց լինել, այսինքն նախ Թուրքերը ապա Հայք :

Կառավարութիւնը փոխանակ այս արդար առաջարկը յարգելու, ընդհակառակն աւելի զայրացած սկսաւ Հայոց հետ խոժոռ վարուել : Տ. Խորէն Եպիսկոպոս Մխիթարեան եւ Հայ-Բողոքականաց Ամերիկացի Մխիթարուհի Միս Շաթիկ ուղղակի վեհ . Սուլթանին եւ Նորին Կայսերական ղթութիւնը հայցող հեռագրեր տալ ուղեցին բայց ձամբայ չի արուեցաւ եւ ոչ իսկ նամակնին կրնային ընդունեցնել :

Յետոյ կառավարութիւնը սկսաւ հետզհետէ զՀայս ճնշել եւ թաղը եւ նոյն թաղի յարակից բոլոր անցքերը եւ կիրճերը բեռններու շօթնանքով պաշարման եւ արգելանաց տակ առնել : Այն ժամանակը մինչև իսկ Տ. Խորէն Սրբազանն ալ քաղաքիս արեւմտեան պարսպէն քառորդ ժամ հեռաւորութիւն ունեցող Սբ. Սարգսի վանքին մէջ կը բնակէր :

Սոյն պաշարումը անընդհատ քառասուն օր տեւեց , որի միջոցին Հայոց բոլոր տանց դռները քարապատ վիճակի մէջ ըլլալով ամեն կերպ հաղորդակցութիւնք դադրած էին , մինչև իսկ զբացին զբացինըսու հետ անկարող էր հաղորդակցիլ . վասն զի փողոցներու անցքերը բոնող բեռնները մեծամեծ շարիքներ եւ

անդթութիւններ կը դործէին : Տեսակցութեան համար տանիքներէ անցնիլն ալ վտանգաւոր դարձած էր . որովհետեւ թէ շօթնանքէն եւ թէ Գալապոյնիցէն տեղացող հրագնդակներէն կը մտցուէին : Ինչպէս որ այսպիսի դռներ ալ ունեցանք :

Այս քառասուն աւուր պաշարման վերջին օրերուն մէջ կառավարութիւնը 12 Հայ երիտասարդաց անունները պարունակող ցանկ մը զրկեց Ազգ. Առաջնորդարան , եւ կը պահանջէր որ զանոնք, իրրեւ ֆօլանէին յարձակում տուողներու պարագլուխներ, իրեն յանձնեն . մինչդեռ խեղճերը բանէ մը անդեկութիւն չ'ունէին : Ասոնց մէջ կային որ նոյն Սառաֆ Պողոսի զարնուած օրը քաղաքէն բացակայ ըլլալով բաւական օրեր ետքը գիւղերէն քաղաք գարձած էին :

Ազգային ժողովականք ուղեցին բացատրել բայց անօգուտ : Կառավարութիւնը լսել չ'ուզեր, անպատճառ կը պահանջէ : Խեղճ Ազգային ժողովականք, առանց բան մը իսկ ըսելու անմիջապէս յանձնեցին զանոնք : Ասոնցմէ զատ բեռնները փողոցը տեսած Հայք յանկարծ ձերբակալած ձեռքով կը տանէին եւ կը բանտարկէին եւ մանաւանդ եթէ Թուրքերը Հայու մը հետ նախապէս գժտութիւն մը ունեցած էին այս միջոցին իբր ֆօլանէին յարձակում տուող ամբաստանելով բանտ կը տանէին : Նաեւ Թուրքերը ծպտեալ կերպարանօք ղիշերով կը պատէին եւ Հայերէն բաւեր թոթովելով հրացաններ կը նետէին : Արքուհի Մթերանոցը աւարտանելու եւ Ապուուլ Բէրիմ հարիւրապետին ձին գողնալու փորձեր կ'ընէին եւ յաջորդ օրը այս ինչ եւ այն ինչ Հայք իբր հեղինակ ամբաստանելով ձերբակալած կը տանէին ու կը բանտարկէին : Ահա այս բարբարոսական եղանակներով 120ի չափ անմեղ Հայեր առանց դատավարութեան եւ առանց պաշմանի ամրաներով եւ տարիներով բանտերու խորերը սպասեցին :

Այս քառասուն օրերուն մէջ ընդհանուր Գրիստոնէից եկեղեցիները գոց մնացին եւ զանգակահարութիւնք իսպառ դադրեցան : Թէեւ եղան Գրիստոնեայք որ զաղանի աղօթեցին , սակայն բնաւ չի կարողացան եկեղեցի երթալ :


Ի վերջոյ կառավարութեան խիստ եւ սպառնալից հրաման եկաւ առ Ազգային Առաջնորդարանն թէ Հայք պարտաւոր են իբր հաւատարիմ հպատակ Օսմանեան Պետութեան ղէնքնկէց լինել : Կառավարութիւնը կը խոստանայ Հայը պահպանելու , ապա թէ ոչ իբր սպասամբ տէրութեան՝ ղէնքով պիտի պատժուին : Հայերը թէեւ լաւ զիտէին Օսմանուր փոխարան , բայց կառավարութեան ուխտով եւ երգմամբ առած հաստատ ապահովութեանց վրայ Ազգային ժողովականք յանձնառու եղան եւ սկսան հետզհետէ աղղէն ղէնքերը ժողովել եւ կառավարութեան յանձնել : Այսպէս մէկ ամիսի մէջ Հայոց բոլոր ղէնքերը կառավարութեան

յան ձևեցին : Սմբողջ գէնքերը 1,000 կտոր էր : Չէնընկեցութեան հետ մեկտեղ Ազգային երեւելիք ազանովազրութիւնն ալ կնքելով կառավարութեան տուին : Սակայն թուրքերուն մեծ մասը չի կնքեցին եւ կառավարութիւնն ալ անոնց աչք գոցելով լռեց :

Դեռ նոր խաղաղութիւնը հաստատուած կարծելով խեղճ Հայերէն ոմանք սկսած էին գործի ձեռնարկելու համար շուկայ իջնել եւ խորտակուած խանութները շէնցնել, որ հացի գրամ շահելու ճամբան գտնեն եւ մահաւանդ գեռ Հայուն սարսափը եւ ան ու զոգը խպառ չ'անհետացած՝ անա հասաւ Դեկտեմբեր 16ի չարազուշակ եւ սգատարած Շարաթ օրը, ըստ որում առտուրն է ի վեր թրքաց կողմէ կրկին յարձակուած մը տեղի ունենալու տարբարձայնութիւններուն վրայ Ազգային ժողովականք ժողով կազմելով անմիջապէս Բաքոյն կը մատուցանեն կառավարութեան եւ եղած տարբարձայնութիւնները կը հաղորդեն : Գիշ կտոր Հաղա- րապետի փոխանորդ Հարիւրապետ Ապախը Բէրիմ Էֆէնտին Լիւ- եւ Միւսէալընք փաշաներուն կողմէ Ազգային Առաջնորդարանը գալով նոյն փաշաներուն յատուկ բարեւաններ կը խօսի, եւ կ'սկսի նախ թաղաւորին գլխուն եւ Մուհամմէտ Մարգարէին եւ Նիւ- Էին վրայ մեծամեծ երգումներ ընելով զԱզգային ժողովականս ապահովել թէ. «Կատարեալ խաղաղութիւն է, որ եւ իցէ կերպիւ- չի վախնան եթէ նոյն իսկ խանակութեան պէս մի բան ալ ըլ- լայ, վեհ. Սուլթանին շնորհիւ կառավարութիւնը պիտի հսկէ Հայոց ապահով մնալուն համար :» Տակաւին բարեւանները իր վըս- տանեցուցիչ խօսքերը չի վերջացուցած, յանկարծ շուկայէն փոթո- բիկը ծագեցաւ եւ նա ափ ի բերան մեկնեցաւ :

Անա թուրքերը շուկաներուն մէջ կը պոռան. «Մնպատրաստ- նել'ը, շուտով գինուեցէ՛ք եւ փութացէ՛ք դէպ ի թըլֆըտուրէն Հայոց թաղը մանկելով Հայ ջարդելու : Ուրիշ կողմէ մանեկ ար- գիլուած է, որ թուրքերէն կորուստ չ'ըլլայ : Օ'ն, Մուհամմէտի «Էլալաի» Ասոր վրայ բոլոր խանութները գոցուեցաւ : Կայծակի արագութեամբ կը խանութին նախ շուկայի մէջ եղած Հայերը կը ջարդեն եւ ապա խուճը խուճը դէպ ի թըլֆըտուրի բլուրը կը դիմեն, որք զինուած էին ամեն ահաակ գէնքերով : Ինչպէս, սուր, դաշոյն, սակր, Բեպէր, ճննէն, կացին, վեցհարուածեան, եւ այլն : Մարթիիի հրացանն ալ բեֆֆներու բաժինն էր : Ժամը 6 ու կէսն էր անա հրազինուց պայթումները սկսան : Սոյն միջո- ցին 8 ձիաւոր զօրքեր Գալապոյլներ ելլելով յարձակուածը յետ մղեցին եւ քանի մը գինուորներ ալ բերդը թնդանօթին քով ելլելով սկսան լեցնել եւ Լիւլ փաշան ալ շատ մը բեֆֆներ եւ երկու մատուկ փամփուշտ հեան ունենալով թըլֆըտուր ելաւ եւ ապա նոյն փամփուշտները զօրաց բաշխուեցաւ :

Երվանդ



Հայք ամեն կերպով կառավարութեան հրամանները յար-  
գելով հպատակութիւն խնայած չ'ըլլալնուն նորա շնորհն վաս-  
տըկած կ'երազէին . անոր համար կառավարութեան մէն մի շար-  
ժումները իրենց նպաստաւոր կը համարէին : Ուստի երբոր 8 ձիւ-  
ւորներ Գալապոյնն ելան՝ Հայք կարծեցին թէ զիրենք պահպա-  
նելու համար յարձակումը յետս մղելով պիտի զարնեն : Իրաւ է  
որ յարձակումը Գալապոյնէն յետս դարձուցին բայց ոչ թէ յար-  
ձակումը արգիլելու այլ կարգաւորելու համար , ըստ որում Թըլ-  
ֆրտուրէն Հայք զարնել որոշուած էր : Եւ որովհետեւ Գալապո-  
յնէն նպատակին առաջնորդելու յարմարութիւն չի կար , հետեւ  
ւարար նոյն ձիււորները անդ կենալով եղած յարձակումը բեր-  
դին ետեւէն իջնել կարգադրեցին , ուրիշ շիտակ եւ դիւրին կեր-  
պով Թըլֆրտուր կ'ելլուէր :

Երբոր բերգը ելլող զինուորները թնդանութիւն լեցնել սկսան  
Հայք կ'երեւակայէին թէ երբ թուրք սպստամբնները յարձակին ,  
յայնժամ պիտի ոմբակոծուին : Բայց խեղճ Հայերը չկրցան զիտ-  
նալ թէ երբ Հայ թաղէն զիմադրութիւն ըլլայ , զայն պիտի ում-  
բակոծեն : Ինչպէս որ վերջը հասկցան :

Եւ երբոր Լէլա փաշան բեֆֆնէրով եւ սպարապետութեամբ  
Թըլֆրտուր ելաւ , Հայք երազեցին ըսելով թէ . « Լիվա փաշան  
անձամբ Հայոց պահպանութեան հսկելու ելած է : » Բայց չէ' , չէ' ,  
այլ յարձակողական թշնամիները խրախուսելու եւ կարգաւորելու  
ելած էր : Ո՛վ սոսկալի յուսախաբութիւններ : Խեղճ Հայ , ո՞րու  
կը վստահիս : Կառավարութեա՞ն : Նա է արդէն քու կեղեքիչդ եւ  
դահիճդ : Ուրիշ բան մի՛ մտածեր եւ երազեր , փորձանքը ուղ-  
ղակի քեզ կ'սպաննայ : Աւաղ , օրհասականդ է այլ եւս :

Ահա հետզհետէ հազարաւորներ Թըլֆրտուրի բլրազաշար  
լեցուելով հրազինուց իրարանցումը կը սաստկանար : Թուրքերը  
սկսան Լէլա փաշային պոռալ թէ . « Մենք առանց բեֆֆնէրու ա-  
ռաջնորդութեան կարող չենք Հայոց թաղը մանել , ուրեմն բեֆֆ-  
նէրը թող մեզ առաջնորդեն : » Լէլա փաշան կը պատասխանէ թէ .  
« Չաւակինե՛րս , մի՛ վախնաք , ես Հայոց քովը դէնք չեմ թողուցած  
բոլորն ալ առած եմ , քալեցէ՛ք եւ մի՛ վախնաք : » Իսկ անոնք ոտքերը  
նին զեպին կոխելով կ'ըսէին . « Անպատճառ բեֆֆնէրու առաջ-  
նորդութեան օգնականութիւնը կ'ուզենք : » Յայնժամ Լէլա փաշան  
անոնց առաջարկը ընդունելով տասը մարդու երկու բեֆֆնէ օգնա-  
կան-առաջնորդ կարգեց եւ ինքը թողուց գնաց : Յետ այնորիկ  
անա ուլե՛մ Խոճա մը բարձրադիր տեղ մը ելլելով նախ հանդարտու-  
թիւն կը պոռայ եւ մի քիչ համբերութիւն կ'ազդարարէ : Յետոյ  
ուշադրութիւննին խնդրելով , նախապէս տրուած պատուէրներու  
եւ ֆէրմաներու համառօտ յիշեցումը ընելը կը ծանուցանէ ըսելով .

«Ելեալէն», է՛յ ուսուցիչ Մեւլիթի, կանանց, աղջկանց ու մանկուկաց մի՛ գուչիք, կողոպուտի ալ մի նայիք, միմիայն տասներկու տարեկանէն վեր եղող արուեսները անխնայ ջարդեցէք: Հնար եղածին շափ իւրաքանչիւր ոք իրենց սիրելի բարեկամները գտնելով թող ձեռքովը սպաննէ, որուն վարձքը շատ է: Եթէ մէկ Իսմայէլացի իսլամ մը տասը Հայ սպաննէ արքայութեան մէջտեղը կ'իյնայ, իսկ եթէ աւելի լինի, ալ անոր վայելելիք յախտնական փառքը անձառելի է, եւ մանաւանդ այս վերջնոց համար քառասուն հերթի հընէ աւելի պիտի չնորհուի եւ մասնաւոր իրաւունքներ պիտի ունենան իրենց սիրածները արքայութիւն տանելու համար: Մէն մի ոք իրեն սպաննածին արիւնէն մատ մը լիղելու է: Ահա այսպէս արուեսները ջարդելէ ետք Հայերու ամեն ինչքերը, ստացուածքը, կալուածները, կիները եւ աղջիկները բոլորն ալ մեզն են: Ուստի օ՛ն, որդեակներս, Մուհամմէտի «Եւլալի» կանչելով անխնայ ջարդեցէ՛ք սա ինչպէր Հայերը: Նաեւ մի՛ մոռնաք Հաճի Լաթիֆ Խոճաի տուած ֆելիան, որ վարդի եւ փուշի օրինակովը ըսած էր: Այսպէս ամեն բան կարգի դրուած ըլլալը փողահարութեամբ ամեն պաշտօնէից հաղորդուելով արձակման ժամուն հասած ըլլալը աւետուեցաւ:

Ո՛հ, աւաղ, գիշատիչ գաղանաց եւ կատաղի գայլոց ոչ խարաց հոտին մէջ յարձակման սրտաճմլիկ տեսարանին նկարագրութիւնը ընել ի՞նչպէս կարելի է: Միմիայն գղայուն սրտի աէր եղողը թող մտաբերէ:

Ահա այս յարձակող գաղանական խումբերը սկսան Հայ թաղը խուժել, մէն մի խումբի հետ երկու երեք բեթիք եւ երեք հատ ալ պալլաճի եւ քանի մը Խոճա: Տուներու բարձանց վրայ գտնուող բեթիքները Մարթինի կրակներ կը տեղացնէին Հայ թաղի վրայ: Ի փախուստ աճապարող Հայերէն ոմանք պատերէն անցած ժամանակին, ոմանք ասնեաց վրայ եւ ոմանք փողոցներու մէջ նահատակ կ'իյնան նոյն բեթիքներու հարուածներէն:

Ահաւասիկ յարձակող խումբերը հայ դռներուն մօտնալով նախ պալլաճին կացինի հարուածով դուռը կը խորտակէր եւ անմիջապէս ներս լեցուելով բեթիքը իսկոյն երկու երեք Մարթին կը պարպէր նոյն տան գաւթին մէջ: Ամէն մի Հայ ծակ մը մըտնել կ'շտապէ եւ իւր հետքը կորսնցնելու անկարող եղողը անմիջապէս կը զարնուի: Տես որ, ծոց սենեակ մը որուն մէջ ընտանեօք արք եւ կանայք եւ մանկուկք կծկաած մերթ կ'աղօթեն, մերթ կ'ողբան եւ կը կոծեն եւ Սբ. Հաղորդութեան տեղ կտոր մը հող կ'աննէին, ճիշդ այս միջոցին յանկարծ կացինն այս դըրանն ալ հայրնելով զայն կը խորտակեն եւ բեթիքները Մարթինի հրացանը անոնց մէջ ալ կը պարպեն: Ալ այն ատեն խեղճ

ընտանեաց սոսկունն ու սարսափը կարգացող եղբայրները թող ի միտ անուռն: Յայնժամ մայրը իւր սիրասուն զաւակները եւ հայրը իւր ընտանիքը թողած՝ խեղացնուած փախչիլ կը փորձեն, բայց անօդուտ, ճա՛ր չի կայ, գիշատիչ արիւնարբու ճիրաններէն աղատուժ չի կայ: Ո՛ր կողմ փախչիս մահուան սուրը կամ պալլաճն վերահաս է:

Սեւալախի աղաղակներէն եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւմենասուրը անուան եղած հայհոյութիւններէն երկինք եւ երկիր կը դողային եւ կը սարսափէին: Իսկ հրացաններու եւ վեցհարուածեաններու հազարաւոր պայթումներու ձայներէն սարեր եւ ձորեր կը դղրտէին: Սակայն Եգիպտոյ խեղճ Հայերուն սրտերը ի՞նչ կ'ըլլար արեօք: Խղճամիտ կարգացողները թող մտաբերեն:

Տակաւին նոյն տունէն չեն բաժնուած տեսած արուսին կը մեռցնեն եւ յետոյ կը յօշոտեն: Բեթիքները կանանց մօտնալով կ'ըսեն. «Ինչո՞ւ այսչափ կը յուզուիք, մի՛ վախնաք ձեզ համար բան չի կայ, մենք ձեր էրիկները պիտի ջարդենք եւ զձեզ պիտի աղատենք ձեր ֆէ՛ս Կալալայ էրիկներնուդ ձեռքէն եւ յետոյ պիտի գանք այս տուները ընակելու եւ ձեր հետ Կիլիսի (պսակ) ըլլալու եւ զձեզ ամեն կերպով խնամելու որ մեր պարտքն է. ուստի հող մի՛ ընէք, եւ այլն»: Այս խօսքերը ըսուած միջոցին խեղճ կանայքն այս եւ այն կողմ կը քաշկուտեն եւ զանոնք մինչեւ ամօթոյքը մերկացնելով ոսկի եւ զարդեր կը փնտռեն, անոնց աւկանջները եղած օղերէն բռնած կը քաշեն եւ ականջին պատուելով օղերը կը գրաւեն: Խեղճ հայ կանայք, մէկ կողմէն այս չարչարանաց մատնուած, միւս կողմէն իրենց սիրելեաց մահը տեսած կը խեղացնուէին եւ կը հեծէին: Սակայն չար գաղանք կանանց վրայ կը բարկանան այս կսկածանաց պակասը լրացնելու եւ մինչեւ իսկ զանոնք կը հարուածեն որ լոեն եւ մերթ կը խրախուսեն սր չի վախնան: Այս միջոցին շատ կանայք իրենց սիրելեաց վրայ նետուելով կամ անոնց հետ կ'սպաննուէին եւ կամ ծանրապէս վիրաւորուած գետին կը փռուէին: Շատերն իրենց զաւակացը դիակները գրկած անոնց արեամբը շողախուժելով բաժնուիլ չէին ուզեր: Անգութ դաշիճները այս սրտաճմլիկ տեսարաններէն իբր թէ դուարթացած՝ ոմանք գեղեցկազէմ հարսներն ու աղջիկները կը գերեն եւ ոմանք մասամբ մը տունը թալլելով կը մեկնին: Առաջին յարձակողաց մէկ մասը գեւ նոյն տանը մէջ է, ահա երկրորդը կը հասնի եւ առաջնոյն չի տեսած եւ չի կարած անձինքը երեւան հանելով կը մորթեն: Այսպէս երրորդ, չորրորդ, ասաներորդ եւ մինչեւ քսաներորդ յարձակումներ իրարու յաջորդելով տունը թէ՛ անձնապէս եւ թէ՛ նիւթապէս բոլորովին կը դատարկացնեն: Շատ տուներու դրանց եւ

պատուհաններու փեղկերն ու բանալիները զը տանէին եւ տան մէջ գտնուած տախտակամասները, հայելի, բողոզ, կարաս, շքե շքե, եւ այլն այս կարգի բաներ որք թալլելու դժուարութիւն կը պատճառէին, ջարդ ու կտոր կ'ընէին: Շատ տուներ նաև թով հրձիգ կ'առնէին, շատ դիակներ եւ ողջ վերաւորեալներ կ'առնէին: Ահա այսպէս անթուելի շարքերով յառաջանալով մինչեւ ցածը իրար խառնելով վրան նաև թ կամ քացախ կամ գինի կամ ողի կը լեցնէին: Ինչպէս ոսպը, սիսեւը, աղը եւ կորկտը, եւ այլն: Ամեն տուներու հաւերը կը խեղդէին եւ կ'առնէինը կ'առնէին: Երբ ըսելով կ'սպաննէին: Շատերը ձեռքերնին ճրագ բռնած գետնափոր յարկերը իջնելով մարդ կը փնտռէին եւ եթէ գտնուէր այլ եւ այլ շարչարանքներով կ'սպաննէին եւ յետոյ մաս մաս կը յօշոտէին: Ամեն տուներու մէջ գտնուած թէ՛ գրքեր թէ՛ տու մարներ եւ թէ՛ մուրհակներ պատուած կրակը կը նետէին: Երբ հարուստներու տուները մտնէին, չէին համարձակեր աղատորէն ամեն սենեակ պտտիլ կը կասկածէին թէ զէնք ըլլայ: Այստեղ ալ կեղծաբարութիւնը ձեռք կ'առնէին եւ կ'սկսէին երգմամբ ըսել. «Եթէ մեզի շատ մը ոսկեգրամ եւ այլն տաք եւ մեզ գուհացնէք, ձեզի չենք վնասեր»: Այս հարուստ Հայերը իրենց կենաց փրկանք ըլլալու ամեն ունեցածնին կու տան, մինչեւ իսկ ոսկին գրամարկով անոնց առջեւ կը դնէին եւ մինչեւ անգամ իրենց տան իսկոն ձեռքերն ձեռքերն կը մերկանային, յայնժամ կամ թուրի եւ կամ պոլիսի գոն կ'ըլլային: Շատ տուներու ներքնայարկ գետնափոր տեղերը իջնել չի համարձակելու՝ պատրուակաւ զանոնք գուրս հանելու նպատակաւ կը պոռային. «Ո՛վ որ Մուհամմէտի «էլ-էլ-էլ» բերէ նա կ'ազատի, ուստի առանց վախնալու թող դուրս գայ»: Եթէ գտնուէր պարզամիտ Հայ մը եւ դուրս ելլէր, յայնժամ ալ ըրենքուշտ գաղանաց ճիրաններուն մասնուած կը գտնէր ինքզինքը: Շատ տեղեր օրօրոցի մէջ քնացող մանուկները կը քննէին եթէ աղայ ըլլար մօրը պատիւը բռնաբարելնէն յետոյ մանկան մէկ ոտքէն բռնած սրով կը կիսէին եւ կամ գլուխը ոտքի տակ աննելով կը ջախջախէին ըսելով. «Ահա այս ինչպէս ալ մեծնալով պէտք պիտի ուզէ»: Ահա դժոխորդի Սաղայել Սէյիտ Անմէտի բրած շարութիւնները: Ինչպէս կրնամ թուել: Ա՛հ, այս գաղտնը մէկ ձեռքը սուր անդի մը եւ միւս ձեռքը կանաչ կտաւի կտոր մը բռնած «էլ-էլ-էլ» պոռալով կը պտտի եւ գտած Հայուն թեւէն բռնելով կ'ըսէ. «Մի՛ վախնար, իմ զէնքս չի ցուցնէր, ահա հիմա զքեզ կ'ազատեմ»: Յետոյ կանաչ կտաւը խեղճին աչքերուն գնելով կ'ըսէ. «Վիզդ երկնցուր, ես վարպետ եմ մէկ հարուստ ձէն կը հանեմ, եւ այլն»: Այս արարողութեամբ կը նահատակէ:

Ամենէն վերջ կու գան 10-12 տարեկան թուրք տղաքներ, որոնք ձեռքերնին շամփուր, գանակ եւ այլ տեսակ տեսակ զէնքեր ըլլալով գետինը փռուած Հայ դիակները կը գննէին եւ եթէ չնշառ որ կամ ողջ մնացողներ գտնուէր, զանոնք կամ կը մորթէին եւ կամ շամփուրով կը ծակծկէին որ բոլորովին մեռնին: Ահա այսպէս անթուելի շարքերով յառաջանալով մինչեւ եկեղեցւոյ կից եւ արեւմտեան կողմը գտնուող Մահաթի Սաղայելի էֆէնտիի ապարանքը հասան եւ հոն մտնելով ձերուսի Մահաթի Սաղայելի ըսելով ըստին. «Սա ձերուսի ձեռք մի՛ զարնէք: Հիմակուհիմա իւր գաւակներն ու թոռները աչքին առջեւ մեղցնելով զինքը բարոյապէս խոցելէ ետքը մեղցուցէ՛ք»: Այս կերպով ձերուսիներ երեք տղաքները, կարապետ, Մահաթի Գէորգ եւ Մահաթի Յակոբ էֆէնտիները եւ չորս թոռները, Մահաթի Միքայէլ, Մահաթի Յարութիւն, Հաճի եւ Մէճիտ երիտասարդները, որոնցմէ վերջինը 19 տարեկան էր, այլ եւ այլ շարչարանքներով զոմանս կը մորթէին եւ զոմանս կը յօշոտէին: Յետոյ ձերուսի Մահաթի Սաղայելի էֆէնտիի ամենածանր տանջանք կը նահատակէին: Այս սպանութեանց միջոցին նոյն ձերուսիներ զգացած վիշտերը զգայուն սիրտերը կրնան զուշակել: Իսկ եկեղեցւոյ հիւսիսային կողմէն թաշահան Յակոբ էֆէնտիի տունը, եւ հիւսիսային արեւելքէն Պուշաքճի Մէյտանը հասան: Այսպէս Շարայթ օրը անցաւ: Տեսնենք այս գիշեր եւ վաղը ինչ շարքներ պիտի գործեն եւ կ'առաջաբերութիւնը ինչ միջոց պիտի գործադրէ:

ԵՐԿՈՒ ԽՕՄԲ ՄԱՀՏԵՄԻ ՍԱԳԱԹԻԷԼԵԱՆ ԿՕՐԱՊԵՏ ԷՅԷՆՏԻՍ  
ՆԱՀԱՍԱԿՐԱՆ ՎՐԱՅ

Յարձակումը երբ նորա տունը կը մտնէ, Տէլա Շէյխ Մուհամմէտը ձեռքը պոլիս մը եւ սուր մը բռնած կը ներկայանայ եւ կը պոռայ ըսելով. «Ա՛հ, սիրուն որս, կարապետ էֆէնտի՛, քու գլուխդ Հիւսէյն փաշային տանելով զոյգ ճիւղի պիտի հազնիմ»: Յետոյ նահատակելով գլուխը կը կտրեն եւ կը տանին վերի հիւրանոցը մարմարեայ սեղանին վրայ դնելով եւ զիմացը ձեռք կ'ապելով կ'ըսեն. «Կարապետ էֆէնտի՛, ելի՛ր մեր գործը տես, այսօր քու բժնաբէր եկամ ենք մեզի պատիւ ըրէ, եւ այլն»: Այսպիսի ծաղրական խօսքերով կը քամահրէին, կը հայնոյնէին եւ թուրք հարուստով գանկը ջախջախելով գետինը կը ձգէին եւ յետոյ նիւզակի մը վրայ անցուցած մեծ բազմութեամբ եւ անամօթութեամբ Հիւսէյն փաշային նուէր կը տանին ի մեծ ուրախութիւն անոր:

Մեծ զարմանալին այն է թէ վերի թաղերը երկու երեք հազար տուն կ'ոչնչանայ, հազարաւորներ գետին կը փռուին, շատ հայ տուներ կը հրդեհին, շատեր սանը կրակորման վրայ թողած կը փակչին եւ շատերը գետնափոր տեղերու, ջրհորներու, արտաքնոցաց փոսերու եւ խոր տեղերու մէջ եւ գիւղերու ներքեւ պահուած կը գիշերեն, բայց Հայր Աբրահամու թաղը բանէ մը տեղեկութիւն չ'ունի: Թէեւ եղած հրաշինուց պայթման ձայները լսած էին, սակայն սա համոզումը գոյացուցեր էին թէ զօրքերուն թուրք յարձակողականներուն գիմաղբելուսն հետեւանքն է: Այս անտարբերութեան եւ անտեղեակ լինելու պատճառը, Հայ թաղի բոլոր կիրճերը զօրաց հօգնաներէն պաշարուած ըլլալով, մէկ թաղէն միւսը անցնիլ անկարելի ըլլալն էր, եւ մասնաւոր այս Շարաթ գիշերը նոյն Հայ թաղերը պտտող «էլէէ» զօրքերուն կը հարցուի թէ. «Ի՞նչ կայ»: Անոնք կը պատասխանեն թէ. «Մի՛ վախնաք, բան չի կայ եղածը անցաւ, ասկէ ետքը բան չի կայ: Անդորրութիւնը կատարեալ է, թող ամէն մարդ հանգիստ քնանայ», «Ի՞նչ է Հայ, ո՞րմէ կը հարցնես: Կառավարութենէ՞ն: Նա է արդէն քու դահիճդ ու թշնամիդ:

Գալով եկեղեցւոյ թաղը, այս Շարաթ գիշերը Սիւլէյման Չալաշ իբր մունեաիկ Հայոց փողոցները պատելով կը կանչէ. «Հրամանն այսպէս է. Ամեն Հայ թող եկեղեցին գիմէ, վաղը յարձակում եղած ատեն պիտի պահպանուի», Այս հրապարակական ծանուցումը շուտ մը տարածայնելով ոչ միայն եկեղեցւոյ թաղէն այլ շատ մը թաղերէն կ'սկսին խումբ խումբ եկեղեցին գիմել: Իսկ եկեղեցւոյ շրջակայքը բնակող Հայք ընտանեօք եւ մահճովք եկեղեցի կը լեցուին: Այն հոյակապ եկեղեցին, որոց երկայնութիւնը 64 եւ լայնութիւնը 42 կանգուն է, սկսաւ բազմութեան նեղ գալ որով մաս մը Առաջնորդարան իջան, ուր արդէն շատ ընտանիքներ հաւաքուած էին եւ Ազգային ժողովականք ալ ամբողջովին հոն էին. վասն զի երեկուրն է ի վեր իրենց տուները չէին կրցած երթալ: Ահա այսպէս թէ՛ եկեղեցին եւ թէ՛ Առաջնորդարանի ամեն զրատենեակները եւ մինչեւ անդամ անոր ընդարձակ ներքնայարկերը լեցուելով այս գիշեր մինչեւ լոյս խեղճ Հայոց թէ՛ աստ եւ թէ՛ ամբողջ քաղաքին մէջ ո՛ր աստիճան թշուառութեամբ եւ սգով անցնելնին ընթերցողը կրնայ մտաբերել:

Ահա ծագեցաւ Դեկտեմբեր 17ի սգատարած արիւն Կիրակի առաւօտը, որուն հետ հրաշինուց պայթմունքն ալ սկսան: Յարձակումը քաղեց ամենէն առաջ եկեղեցւոյ վրայ, որուն փողոցի դուռը գոց էր եւ կիցը գտնուած քաղաքին մէջ 40-50 բեֆֆներ կային իբր թէ պահպանութեան համար: Այո՛, պահպանեցին

սակայն միայն եկեղեցւոյ փողոցի դուռը եւ չի թողուցին որ թուրքերէն մին ձեռք դպցնէ: Յարձակողաց կ'ըսէին. «Առանց դրան դպչելու գացէ՛ք ետեւի պատէն անցէ՛ք»: Նոյն իսկ քանի մը բեֆֆներ զանոնք առաջնորդելով եւ եկեղեցւոյ գաւթի ալեմանեան պատը փլցնելով ներս խուճեցին: Ալ այստեղի տեսարանը նկարագրելը նկարագրողին անկարելի լինելուն կը թողումք ընթերցող եղբարց մտաբերել թէ երբ նոյն հոյակապ եկեղեցին շրջապատելով անոր եօթը ամուր դռները կացինի հարուածներու տակ ամուռի եւ 14 պատուհաններէն Մարթինի կրակներ տեղայ, ալ նոյն եկեղեցւոյ մէջ գտնուող անհամար ժողովուրդին անն ու սարսափը ո՛ր աստիճան սոսկալի կը դառնայ:

Ահա այսպէս թուրքերը դռները խորտակելով յաջողեցան ներս մտնել եւ անմիջապէս սկսան ջարդել, եւ արդէն եկեղեցւոյ մէջ գտնուողներէն շատերը պատուհաններէն ներս տեղացող հրահրակներէն գետին փռուած էին: Խարդավիզատէ Հիւսէյն փաշան, որ արդէն սոսկալի երգումներով ուխտած էր եկեղեցին զրաւելով մէջը Եղծ կանչել տալ, ահա ինքն անձամբ առաւօտուն յարձակմանէ առաջ եկած էր որ ուխտը իւր ներկայութեամբ կատարել տայ, որով ներս մտածնուն պէս Եղծ ձայնեցին իրենց Մարգարէին անուրը յիշելով:

Եկեղեցւոյ մէջ 3,000էն աւելի Հայ ժողովուրդ խոնուած էր, թէ՛ այր, թէ՛ կին եւ թէ՛ մանկաիք: Երբ կոտորածը սկսաւ, Հայոց կողմէ ոչ ոք կը գիմաղբեր. վասն զի ամենքը գիշերային պատարագէն հաղորդուած եւ Գրիստոսի սիրովը վառուած ինքզինքնին երկնից պաշտպանութեան յանձնած էին, աշխարհային ամեն բաները մոռցած միայն երկնից բացման եւ յաւիտենակահանութեան ծոցը մտնել կը փափաքէին: Անգութ եւ անխիղճ թուրքերը մէկ կողմէն գեղեցկագէտ կոյս աղջիկներն ու հարսները դուրս հանելով Բարձրահայեաց եւ Ռուբէնեան վարժարանները կը լեցնէին եւ միւս կողմէ եկեղեցւոյ մէջ գտնուողները անխնայաբար կը ջարդէին: Շատ Հայեր այս իրարանցումներէն իսկ չի սրբողելով Սբ. Սեղանին առջեւը կարգ կարգ ծնրադիր աղօթած ատեննին նահատակուեցան: Ահա այսպէս եկեղեցւոյ մէջ ողջ մարդ չի մնաց: Եւ երբոր Ինքնանկար Սբ. Աստուածածնի գմբեթին առաջ եկան, ո՛հ, ո՛հ, մարդկային լեզու մը կամ զրիչ մը ի՞նչպէս կարող է սոյն Աստուածամարնակ Տաճարին մէջ եւ Աստուածանանգիստ սեղաններուն եւ խորաններուն առջեւ գործուած չարեաց եւ սրբապղծութեանց նկարագրին ընել, որ մինչեւ իսկ Գրիստոսեայք պատմելու եւ լսելու ըլլան կը սարսափին: Նոյն Ինքնանկար Սբ. Աստուածածնի պատկերին սպառնալիքներ ընելով եւ սուրի եւ վեցհարուածեանի հարուածներ

տալով կ'ըսէին. «Ն՛, ժողովուրդդ փրկէ՛, թէ որ զօրութիւն  
 ունիս ցոյց տո՛ւր, եւ այլն:» Մին էլ շո՛ւ, միւսը՝ «Ելա՛լա՛ր եւ այլ  
 ոմն հայհոյութիւնք կը պոսան: Ահա խօճա՛ մը թուրը երեւցնելով  
 կ'աղաղակէ. «Ո՞ւր է Գրիստոսնիդ, որ դայ իւր ժողովուրդը մեր  
 ձեռքէն ազատէ եթէ կարող է: Ահա մեր Մուհամմէտին գործ-  
 քերը, ո՞ւր է ձեր Գրիստոսնը: Նաեւ Անգղիացին թող հասկնայ  
 որ մեր թուրը միշտ խաչէն զօրաւոր է, եւ այլն:» Մարթինի  
 հրացաններու պայթումէն եւ «Ելա՛լա՛րի գոռում գոչումներէն եկե-  
 ղեցին կը թնդար, իսկ Գրիստոսի Աստուծոյ մերոյ ամենասուրբ  
 անուան եղած հայհոյութիւններէն երկինք եւ երկիր կը սարսին  
 եւ կը դողան: Ահա այսպէս անթուելի անօրէնութեամբ սկսան  
 եկեղեցին կողոպտել: Ըստ որում սրբազան անօթները եւ սպառ-  
 ները ներքին պահարանը չէին ամփոփուած այն պատճառաւ մեծ  
 դիւրութեամբ կողոպտեցին: Նրանի՛ թէ տուն կողոպտելու պէս  
 ըլլար: Ո՛չ, ո՛չ, ահուելի ձեւակերպութեամբ, վասն զի կրօնքի  
 հակառակութենէ ծնած սխերիմ թշնամանքով ըրած անթու-  
 թիւնին Գրիստոսնից անհանդուրժելի էր, այնպէս որ ոմանք  
 սրբազան անօթներու մէջ կ'ապականեն եւ ոմանք եկեղեցական  
 զգեստները ծաղր ու ծանակ կ'ընեն: Մէկին ձեռքը խաչեր, միւ-  
 սին գոզը աւետարաններ եւ սրբոց մասունքներ կային: Մին կե-  
 նաց փայտի խաչատուփը եւ սուրբ միւսոնի ոսկեայ աղանձին կը  
 գրպանէ, եւ միւսը եպիսկոպոսական թագը հագած միմոտութիւն-  
 ներ կ'ընէ: Ոմանք խաչերը ստքով կը փշրեն եւ այլք քահանա-  
 յական սաղաւարաները եւ զգեստները հագած ծաղրածութիւն-  
 ներ կ'ընեն, եւ այլն: Ահա այս եղանակաւ եկեղեցին բոլորովին  
 կողոպտուեցաւ:

Վերնատունն որ յատկապէս կանանց աղօթատեղի ըլլալու  
 համար կառուցուած էր եւ գրեթէ եկեղեցոյ քառորդ մեծու-  
 թիւնը ունէր, ահա հոս ալ շատ մը բաղձութիւն, արք եւ կա-  
 նայք եւ մանկաիք, խնուած էին, ուր մտնելու համար քա-  
 նիցս մեծամեծ հաւաքումներ եղան եւ թէեւ կացինի հարուած-  
 ներով զոները խորտակեցին բայց ո եւ է միջոցաւ չի յաջողեցան  
 վեր ելլելով ջարդելու ձեռնարկել: Յետոյ աւագ խորանի վրայէն,  
 որ ուղղակի վերնատան հանգիստահայեացն է, բեռնները սկսան  
 անկէ Մարթինի հրացաններ պայթեցնել եւ հետեւաբար վերնա-  
 տան մէջ շատերը գետին փռուեցան: Ո՛հ, ի՛նչ սոսկալի տեսա-  
 րան մը կը տեսնուի, եւ ո՛րպիսի աննկարագրելի իրարանցում մը  
 տեղի կ'ունենայ հոն: Թուրքերը այս իրարանցումէն օգտուիլ ու-  
 զելով կրկին յարձակեցան վերնատան վրայ, սակայն սանդու-  
 խէն վեր ելնելն անհամարձակելի կը թուէր. որովհետեւ Հայ եւ  
 բիւսաօտարգներէն ոմանք վերնատան սալայատակները քակելով





մէջ կը նետէ եւ ապա ինքզինքը : Աւա՛ղ , ի՛նչպէս կարելի է բուրբ միասին թուել : Այս վերնատան հոծ բազմութենէն միայն 109 անձինք ազատեցան , ասոնք ալ եկեղեցւոյ տանեաց մօտը գտնուելուն ինքզինքնին հոն նետեցին , իսկ մնացեալները՝ ողջակէզ եղան առ հասարակ , ոմանք ալ մուխէն շնչասպառ եղան : Ահա վերնատան մէկ ձեռքէն զոհերու արիւնն ու հալած իւղը սկսաւ դուրս հոսել , որոյ հետքը մինչեւ ցայսօր կը կենայ : Երբ այսպէս եկեղեցին մասամբ իւրը կը հրդեհուէր , յանկարծ թուրքերը եկեղեցւոյ կաշառքին տեղը կը գտնեն , ուր գտնուած 25 սնտուկը մեծ ցնծութեամբ բերելով եկեղեցւոյ մէջ սնտուկ մը ասղին եւ միւս մը անդին ցրուած կը ձգեն եւ բաւական դիակներ եւ ողջ վիրաւորեալներ անոնց վրայ դիզելով կը բռնկեցնեն եւ յետոյ վերնատան հիւսիսային դրան մէջ ալ քանի մը սնտուկ պարպելով եւ վրան ննջեցելոց դագաղները ձգելով կը բոցավառեն : Ահա այս վերջին անարկու բոցերէն հոյակապ եկեղեցին բոցերու ովկիանոսի մը դարձաւ եւ բոլորովին բռնկեցաւ : Միայն աւագ խորանը բոցերէն 18-20 կանգուն հեռուն գտնուելով առ այժմ անկէզ կը մնայ , ըստ որում եկեղեցին քարաշէն է որուն մի մասը բռնկցնել պէտք է որ ընդհանրապէս այրի :

Գալով աղգային Առաջնորդարանի , սա արդէն արեան լիճ մը եւ դիակաց կոյտ մը կը պարունակէ . վասն զի եկեղեցին առնուած պահուն ուրիշ խուժադուժ խումբեր անդ մտած եւ հոն գտնուած անձինքը ջարդած էին , իսկ խորախոր ֆաղերու մէջ եւ զողները մասամբ մը ջարդած եւ ապա կրակ ձգելով թէ՛ ողջակիզած եւ թէ՛ մասամբ մը մուխով խեղդած էին , որ մինչեւ ցայսօր դարչանոտութենէն չի մօտեցուիր :

Սարգիս Էֆէնտի Սբ. Յակոբեանի գրասենեակն եկեղեցւոյ գաւթին մէջ գտնուելուն զսա ալ կաշառքով այրեցին փոշի դարձուցին : Ժամաբար քանանայից սենեակը , եկեղեցական սնտուկի գրասենեակը մտան եւ հոն գտնուած թանկագին բաները թաւան ընելով եւ գտնուած տոմարները եւ եկեղեցական ին պատմագրքերը պատուեցին եւ ծանօթ երկու գլորոցները իրենց լեցուցած գեղեցիկ սեռը գերելով տարին : Նոյն պահուն ծնողախորոյս քանի մը մանր տղաքներ եկեղեցւոյ աւագ դրան կարմիր սիւներուն տակ կեցած սրտապատառ կերպով կ'ուլային : «Ա՛խ հայրիկ , ա՛խ մայրիկ , ո՛ւր էք ,» կ'ըսեն եւ կը ճչեն : Տես որ , ան կողմէն քանի մը դազաններ գալով իրարու կ'ըսեն . «Նկէ՛ք զօրութիւնն իս փորձելով տեսնենք մեզմէ որը կարող է սուրի մէկ հարուածով այս կաշառք մանուկներու գլուխները երկկիսել :» Անատեն անմիջապէս մէկը իրեն սուրը վերցնելով եւ միւսը կացինով սկըսան անգթաբար զարնելով մանուկները յօշոտել : Նկեղեցւոյ

գաւթին մէջ գործուած անթիւ չարեաց հետեւութեամբ նոյն ընդարձակ գաւթին նահատակաց դիակներով ծածկուած ըլլալուն առանց անոնց վրայ կոխկոտելու երկու քայլ առնելը անկարելի դարձած էր : Նաեւ կը տեսնենք հոս ձեռք մը , հոն ոտք մը , ուրիշ տեղ երկկիսուած մանուկ մը , կէս գլուխ , ախանջ , մատներ , կէս մարմին , ջրոյ աւազանին եղերքը շարուած գլուխներ , ջրոյ մէջ նետուած գլուխներ , եւ այլն , եւն : Ասոնցմով լաւ կը հասկցուի որ Հայք միայն չ'սպաննուեցան այլ մաս մաս ջարդուեցան բառին բուն նշանակութեամբ :

Կը տեսնենք նաեւ որ եկեղեցւոյ հիւսիսային դրան առաջ եղող նահատակաց քամուած արիւնն փողոցի դրան մէջէն անձրեւի հոսանաց պէս վազելով կոյուղին կը թափի : Աւա՛ղ , ի՛նչպէս կարելի է մանաւանդ եկեղեցիին եւ գաւթին մէջ տեղի ունեցած անգթութեանց նկարագիրն լիովին ընել : Անկարելի է :

Գալով թաղերու մէջ եղած չարեաց եւ անգթութեանց , այսօր ալ երեկուան պէս եւ պակաս մնացած տեսակներովն : Ահաւասիկ կը տեսնենք որ փողոցները դիակներով լեցուած են : Նոյնպէս առանց կոխոտելու կարելի չէ քայլ առնել եւ քամուած արիւններով փողոցներու քարեր եւ պատերը կարմիր ներկուած էր : Կը տեսնենք որ շատ ֆաղերու վառելանիւթերու մէջ կրակ ձգելով անդ պահուածները կամ կ'այրելին եւ կամ միտով կը խեղդէին : Շատ մը կոյր անդամալոյծ թուրքեր իրենց դրան առջեւ կեցած կը դեգերին որ իրենց ալ Հայ մը բերեն որ մորթեն եւ իրենք ալ առաքինութիւն մը գործած ըլլան : Ինչպէս որ եղաւ , մուխանդ ամբոխը ասոնց խնդիրն ալ անտես չ'ըրաւ :

Շատ կանայք որդէծնութեան ցաւով փախած ատեննին մանուկը ճամբուն մէջ ծնելով կամ առանց փաթթոցի դրկած կը փախչէին եւ կամ նորածիննին փողոց կը նետէին , վասն զի անգութ բարբարոսաց յարձակումները շարունակ իրարու յաջորդելուն խեղճ կանայքը տունէ տուն եւ փողոցէ փողոց հալածական կ'ընէին առանց քիչ մը հանդիստ տալու : Շատ կիներ , որ ընտանեօք ստորերկրեայ անձանօթ տեղեր պահուրտած էին , տեսնելով որ կաթնասուն մանկտեաց լացովն իրենց տեղը պիտի յայտնուի , յայնժամ մայրեր մայրական գորովանքը մէկդի թողած զաւակնին իրենց ձեռքով կը խեղդէին : Եղեսիոյ Հայոց տուներուն իւրաքանչիւրին մէջ մի ջրնոր գտնուելուն՝ շատերուն այս ջրնորներու մէջ պահուրտած ըլլալը հասկնալուն մէն մի ջրնորի մէջ թէ խոչոր քարեր կը նետէին եւ թէ հրազեններ կը պարպէին որ անդ գտնուողներն այս կերպով մեռցնեն : Շատերը ինքզինքնին դիակաց ներքեւ եւ կամ անոնց մէջ նետած արիւնաթաթախ լինելով կենդանութիւն կը պահէին : Շատ Հայ կանայք

և և աղջկունք զազանաց ճիրաններուն չի մատնուելու նպատակաւ ինքզինքնին ջրհոր կը նետէին, երբեմն ալ մայրերը նախ մանուկնին եւ ապա ինքզինքնին ջրհոր կը նետէին, վախնալով թէ զուցէ մարդ չի մնալուն իրենք Տաճկաց գերի կ'ըլլան: Ամենապարզն Աստուած իւր հրաշքներն ալ չի ինայեր երբեմն, Գաբանըղ Գրիգորի տան ջրհորին մէջ 14 անձիք, նախ մանուկները յետոյ ինքզինքնին կը ձգեն եւ ոչ թէ կ'իջնեն: Թող լաւ մտաբերուի այս տեսարանը, երբ 25-30 կանգուն խորութեամբ ջրհորին մէջ վերէն մինչեւ վար նոյն անձինք գահալիժելով ուղղակի ջրին մէջ կը խորասուզուին եւ յայնժամ ջրին բնական ցնցամարը ջրին երեսը կ'ելեն եւ անոնցմէ մին նեցուկ մը գտնելով թէ եւ միւսները մէկիկ մէկիկ թեւերնուն բռնած ջրէն կը հանէ բայց կենալու տեղ չի գտնուելուն օտքերը պատին կը թնցուցած մի քանին անոր վրայ կը կանգնին իսկ մնացեալները մինչեւ ծիծերնին համող ջուրին մէջ կ'սպասն, 10-12 ժամ շարունակ այսպէս մնալով եւ միմիայն մի մանուկ կորուստ տալով ապահովարար դուրս կ'ելեն: Այժմ նա, որուն օտքերուն վրայ 5-6 անձինք իրարու վրայ ժամերով կանգնած էին, կը պատմէ. « Թէ' ինք ալ եւ թէ' անոնք որք ջուրին մէջն էին, ո'չ ցրտութիւն եւ ո'չ ժամանակի սահուածը զգացեր էին: Ահա մի մեծ հրաշք »:

Հայրապետ անուենով Հայ երիտասարդ մը Թըլֆրտուրի կողմերը Թուրքերէն հալածուելով կը փախչի եւ գիտնալով որ ազատին անկարելի է, նոյն պահուն կը տեսնէ ջրեպան Գէոճանի տան վերնայարկ ամբարնոցի ջրէջէն հոսած արեան հեղեղը եւ կերթայ անոր ներքեւ կծկուած երեսի վրայ կ'իջնայ շնչասպառ որպէս զի մեռած կարծուի, սակայն անցող դարձող Թուրքերու հարուածներէն ծանրապէս կը վիրաւորուի, սա յետոյ ապաքինելով կենդանի մնաց բայց օջ ձեռքը գրեթէ կորոյս: Զորեպան Գէոճանի տունը թաղին ընդարձակ տունն ըլլալուն շատ մարդիկ այնտեղ տպաստանած էին: Վերոյիշեալ ջրէջէն հոսած արիւնը այս տան մէջ ջարդուած 71էն աւելի մարդկանց արիւնն էր:

ԵՐԿՈՒ ԽՕՄՔ ԱԼ ԵՆԲՈՒՆԻ Տ. ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՀԱՆԱՅ Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ  
 ԶԱՐԲԶԱՐ ԿԱՀԱՏԱՎՄԱՆ ՎՐԱՅ

Սա ծերունի քահանան եկեղեցւոյ փողոցի դրան գէմ իւր փեսային տունը վառելանիւթերուն ներքեւ քանի մը ընկերներով պահուած էր, իւր յանդուգն հազը Թուրքերու յարձակման պահուն կը բռնէ եւ զսպելու անկարող լինելուն զինքն ու իւր ընկերները կը մատնէ, անմիջապէս երեսան կը հանեն: Խեղճ քահանան իւր ընկերաց չարաչար մահը տեսնելով իւր բանաստեղծական ճարտարախօս Թուրքերէնովը շատ թախանձանօք եւ

պաղատանօք առատահոս արտասուք թափելով կ'ըսէ. «Նս Կէրէն Կոստ եմ, ինձ ինայեցէք ձեզ համար շատ կ'աղօթեմ, եւ այլն:» Երբ կարգը իրեն կու գայ, դահիճք կը պատասխանեն: «Մենք զթած ազգ ըլլալնուս ինդիրքը կ'ընդունինք, Կեւաւորներու պէս անուրթ չենք եւ անա փոխանակ Մարթինի հրացանով զարնելու որ անմիջապէս կը մեռնէ, կամաց կամաց կ'սկսինք որ գոնէ կէս ժամ աւելի ապրիս:» Յետոյ ծերունին նահատակաց վրայ կը նստեցնեն կ'սկսին ձեռքի մատներէն խաղ առ խաղ (պոլոս պոլոս) ամբարով կտրել եւ անջատել մինչեւ ուսերը: Յետոյ ուրքի մատներէն սկսեալ երբ կըրունկի խաղը քակել կտրել կ'աշխատին, ծերունին սարափելի ձայներով կ'աղաղակէր, օգնութիւն կը խնդրէր եւ չի դիմանալով մեղք կը մարէր եւ մեղք կը խեղցնորէր. սակայն անխիղճ Թուրքերը ձեռք ձեռքի զարկած խնդալով կ'ուրախանային: Երբ մինչեւ ազդերը կը հասնին, նա արդէն կիսամեռ եղած էր: Յետոյ ականջները, քիթը եւ շըրթունքները կը կտրեն, մասամբ ժորուսը կը փետեն եւ ապա ամենէն վերջ կը գլխատեն: Ճիշդ եւ ճիշդ Թաշճեան Յակոբ Էֆէնտիի տան մէջ ալ այս եղանակաւ անգլթական յօշոտմամբ գործուած թիւն տեղի ունեցաւ:

Յետ ամենայն չարեաց ժամը Ծին ատեն, անա Սաղայէլ Սէյիտ Անմէտ եւ զժոխորդի Հիւսէյն փաշա, Պարսկական փոխհիւպատոս Նինսեան Հաճի Պէքիր Պէյ, Հաճի Բեամիլ Զատէ Հաճի Մէնմէտ Պազիր ազա եւ Գրդոյ Հալիպալի եւ այլն իրենց արբանեակներով եկեղեցի եկան եւ անկէ առաջնորդարան իջան: Կատարուած ջարդը եւ անգլթութիւնը զիրենք շատ ուրախացուց եւ խօսակցելով ճիշդ իրենց ուղածին պէս ըլլալը կ'արտայայտէին, իրենք իսկ Հայ ջարդելու պտոյտէն կը դառնային: Ինչպէս իրենց արիւնաթաթախ զգեստներն կը վկայէին:

Հիմակ Հայ ջարդելը վերջացաւ: Յետ այնորիկ այլեւս մնացեալները պահպանել եւ Թուրքերը յետո դարձնել կը պարտաւորին, ըստ որում բեռնները տեղացի էին այն պատճառաւ Թիւրք յարձակողաց վրայ ազդեցութիւն չէին բանեցնէր. որովհետեւ յարձակողը կամ եղբայրնին կամ հօրեղբայրնին եւ ազգական բարեկամնին էին եւ մանաւանդ որ Հայոց արիւնը ծծելու կ'աշխատէին: Այս պատճառաւ թէ եւ երգմամբ կը պոռային. «Ո՛վ որ պահուրտած է թող զուրս ելնէ, խաղաղութեան փողն հնչեցաւ, այլ եւս բան չի կայ:» Սակայն զուրս ելնողները նորէն կ'սպաննէին: Այսպէս 2 ժամ ալ խարդախութեամբ ջարդելով ժամ 12ին ջարդը բոլորովին զադրեցաւ:

Եւ ապա ժամը 12էն ետք սկսան թէ' այր թէ' կին եւ թէ' մանկտիք մնացող Հայերուն ամէնքը բոկոտն եւ առանց կտոր մը

ծածկոցի տուներէն վերցնելով կը տանին եւ այլ եւ այլ տեղեր կը հաւաքեն : Ինչպէս Աղբային պանդոկը, Մուհամմէտ Պէյի պանդոկը, Միւհէյէտտին Պէյի պանդոկը, Սամսաթու Դոան Մզկիթը, Մեծ Մզկիթը, Գարտաշարու Մզկիթը, Աբրային կից Մզկիթը, Սազըպիէ Թէքքէն, Հայր Աբրահամու Մզկիթը, Դրսի քաղաքի զօրանոցը եւ Տաճկաց տուները : Ահա այսպէս 4,500 տունէ բաղկացեալ Հայ թաղը պարպեցին առանց անկողին մը իսկ տալու եւ հազարաւոր Հայեր նոյն գիշերը խանրու անկիւնները եւ խոհանրու անձրեւէն ցեխ դարձած աղբերուն վրայ եւ ճածնեւրու հիւսիները եւ ցեխոտ ու ջրոտ սրահներու մէջ բացօթեայ, անպատսպար եւ անսուաղ կ'անցունեն առանց մին միւսէն տեղեկութիւն ունենալու : Հայ թաղը որ երկու օր շարունակ կուղտուած էր, եթէ չնչին բան մը մնացած էր, ան ալ այս գիշեր ճաքաղով բոլորովին դատարկացնելու նպատակաւ էր որ այսպէս Հայ թաղերը Հայ բնակիչ չի թողուցին . որով այս գիշեր Հայ տուները բնաւ բան մը չի մնաց, մինչեւ խորտիկի շամփուրները ու խոհանրերը եւ շատ տուներու պատուհաններուն եւ դռներուն փեղկերը :

Ահա եղաւ Երկուշաբթի, Դեկտ. 18, անձրեւը սաստիկ կը տեղայ եւ ցուրան ու փուրը կատաղաբար կը փչէ, ճիշդ այս միջոցին խեղճ Հայերը հարիւրաւորներով խումբ խումբ խանրէն ճածնեւրը, ճածնեւրէն խանրը շուկաներէն եւ փողոցներէն անցուցած կը պտտցնեն, իբր թէ պատերազմած են եւ յաղթելով մնացածը գերի կը տանին, այս կերպով ցրուեալ եւ կորուսեալները իրարու միացնել կ'աշխատին : Բայց իրար գտնել ի՞նչ կարելի է, վասն զի ծանօթ եղած տեղերէն զատ կը տեսնես որ աղջիկ մը Տաճկաց թաղէն, հարս մը Գէօթլէրու թաղէն կ'ելլէ, մանուկ մը Սարըլարու թաղէն եւ ուրիշ մը Պէկ-Գափուսիթ թաղէն կ'ելլէ, եւ այլն, աստ եւ անդ կը գտնուին : Այս միջոցին չորս հինգ տարեկան ծնողակորոյս Հայ տղայ մը լալով հառաչելով իւր ծնողքը կը փնտռէ . Ո՞ր ես, մայրի՛կ, ըսելով : Տես որ արիւնարբու թուրք մը անոր կը հանդիպի եւ անոր հասակակից հինգ վեց թուրք տղաքներ հաւաքելով զանոք կը քաջալերէ ըսելով . «Եկէ՛ք, տղաքնե՛ր, դուք ալ այս Հայու տղան սպաննեցէք որ սորվիք եւ սիրաբերիք կարծրանայ :» Այն ատեն թուրք տղաքները խեղճ Հայ տղուն վրայ կը յարձակին ոմանց ձեռքը զանակ եւ ոմանց ձեռքը փայտ եւ քար վերջապէս կ'սպաննեն : Խեղճ մայրերը առանց ծածկոցի եւ բոկոսան սպակեայ կտորները փափուկ ոտքերնուն կուլ տալով հոս եւ հոն կը քաշկուտուին, մինչեւ իսկ զիականերու մէջ կը պտտցնէին որ թերեւս վիրաւորներ գտնուին զանոնք ճանչնալով վերցնեն, այս վերջինն

անտանելի էր քան զամենն : Ահա այսպէս գեղեցիկ սեռին կրած անպատուութիւնը եւ հանած աղիողորմ հեծեծանքը մենք անկարող ենք բացատրել . ուստի կը թողունք զգայուն սրտերու գիտնալ :

Գալով նահատակաց զիականերուն բարձմանը, կառավարութիւնը մեծամեծ փոսեր պեղել տալով օրական եօթը շաբաթով մարդ վարձու բռնեց եւ զիական ոտքերէն չուան կապել տալով փողոցներու ցեխերուն մէջէն երեսն ի վար կը քարչեցնէ եւ նոյն փոսերն լեցնել կու տայ եւ քարչուելուն զիւրութիւն ըլլալու համար քաշողք 4-5 դիակ իրարու կապած մէկին ոտքերն միւսին դրուխէն կամ թեւէն կապած կը քարչեն, որոնցմէ շատերը ողջ ողջ կը քարչուէին : Ո՛հ, անսահման անգթութիւն : Տես որ քարչուած ատեն մին դուրսը վերցուցած օգնութիւն՝ եւ միւսը կաթիլ մը ջուրը կը խնդրէ եւ ոմանք իրենց վերջին չնչովը աքաղաղով հառաչանքներ կը հանեն բայց ոչ ոք կ'ուզէ լսել քանի որ քարչողներն ալ թշնամիներ, այսինքն թուրքեր եւ Հրեայներ էին : Թուրքերու նպատակակէտը Հայերը խապառ ջնջել ըլլալուն ամեն կերպով կը ջանան Հայը աւելի պակսեցնել : Անոր համար ջարդի օրը գետին ինկածներուն ամենը, թէ՛ մեռեալ եւ թէ՛ վիրաւոր, միասին քարչելով փոսերը լեցուցին :

Այս քարչողութեան միջոցին ընդհանուր առմամբ առ Հայ ազգն, Պատրիարքն եւ Առաջնորդն, մանաւանդ եւ մանաւանդ առ Քրիստոնէական սուրբ կրօնն, Անգղիական մեծափառ տէրութիւնն եւ Վեհ. Թագուհին անպատուող անարգանքներն ու հայհոյութիւններն ամէն ցաւերը կը գերազանցեն : Որովհետեւ ոմանք կ'ըսեն . «Բարեւի կեցէ՛ք, Էրօօններուն Ֆերէճը, հազարապետը, հարիւրապետը եւ այլն կու գայ Ձէյթուն երթալու . Գահէ Ինչէլը պէտէ խոստացած է :» Մին կ'աղաղակէ . «Ո՞ր է Ինչէլը մեծափառութիւնը, թող գայ լաւ հասկնայ որ մեր սուրբ միշտ փայլուն է : Ահա իր պաշտպանած Էրօօնները շան զիակի պէս կը քարչենք :» Միւսներ կը հեզնեն կը ծաղրեն եւ մանաւանդ երբ նշանաւոր կամ հորուստ կամ կրօնական անձանց հանդիպէին, ալ ասոնց վրայ բերած անպատուութիւննին եւ հայհոյութիւննին անհանդուրժելի էր : Աւելի սրտածմելի էր տեսնել երբ կրօնականները սոցա կրօնի նկատմամբ հայհոյութիւններով կը քարչէին . ինչպէս, Հայոց եօթը օժեալ քահանաները եւ Հայ-Բողոքականաց Հովիւ-քարոզիչ Ապուհայթեան Յակոբ Պատուելի Հայրը, սա վերջինն մասնաւոր անարգանք . վասնզի գազանք գիտին զանաղանել եւ անա կը պոռան . «Ո՞ր է Ինչէլը, ուրուն յուսացած էիր : Հիմա թող գայ քեզ պաշտպանէ, գոնէ դիակը թող վերցնէ որ շան պէս կը քաշուիս :» Ա՛խ, զո՞րն աւսեմք եւ զո՞րն գրեմք, զի չարիքն անթուելի եւ անօրէնութիւնքն

անսահման են : Ամբողջ եղող մարմինները քարչեցին իսկ մարմնոյ մասունքներն ալ պարկերը լեցուցած ձիերով կը կրէին :

Ահա այսպէս քարչելով ինն տեղեր լեցուցին : 1. Եղեսիոյ արեւմտեան պարսպի վրայ Չինթիանլի Վիճարանեան փողոցի գլուխը գտնուած վաթսուն կանգուն խորութիւն ունեցող խոր վերապը մինչ ցերեանն լեցնելով վրայի շէնքն ալ վրան քանդեցին որ մինչեւ ցայսօր այնպէս կը կենայ : 2. Դարձեալ ասոր շատ մօտակայ արեւմտեան պարսպին ներքին քարայրը լեցուցին : 3. Սոյն քարայրին առաջը գտնուած Մահտեօի Սաղաթիէլ էֆէնտիի գեանին մէջ մասնաւորաբար պեղուած փոսին մէջ, 4. Տաղլար Գափուսիին կից մասնաւորաբար պեղուած փոսին մէջ : 5. Եւ 6. Աղգային կամուրջի հարաւային կողմը իրեն կից գտնուած երկու փոսերու մէջ : 7. Սոյն կամուրջի հիւսիսային կողմը սորա կից քարայրին մէջ : 8. Եւ 9. Եկեղեցւոյ գաւթին մէջ, մին Ռուբէնեան վարժարանի առաջ եւ միւսը այն վարժարանի դիմացը քիչ հեռու պեղուած երկու փոսերու մէջ լեցուցին : Սա վերջին երկու փոսերու մէջ չի կարծուի թէ եկեղեցւոյ գաւթի եւ Առաջնորդարանի դիակները, մարմինները լեցուցաւ, այլ եկեղեցւոյ մէջ նահատակուած ողջակէզներու ոսկերոտիքը եւ խանձածները, որք քարչել անկարելի էր եւ պարկերով տանելն ալ այնպէս զի գարչահոտութենէ չէր դիմացուիր անոր համար այս փոսերու մէջ լեցուցաւ ու վրանին ալ չէրէճով ծածկեցին :

Գալով եկեղեցւոյ գաւթի եւ Առաջնորդարանի դիակաց աստնք ալ չուաններով քարչուած զրօի փոսերուն մէջ ամփոփուեցան որովհետեւ Թրքաց երզուսն ու ուխտը այն է թէ սպաննուած ամբողջ մարմինները փողոցներու ցետերուն մէջէն քարչուելու է : Վերոյիշեալ ինն տեղերէն զատ այլ եւ այլ տեղեր եւ ջրհորներու մէջ դիակներ ձգուած եւ ծածկուած են որ դեռ մեզ անյայտ է :

Ահաւասիկ այսպէս 4 օրերու մէջ, որ է մինչեւ Հինգշաբթի, դիւքարչութիւնք լրացան եւ կառավարութիւնը ութը հազար դահեկան քարչողներու վարձք վճարեց : Այս միջոցին դիւքարչք իրենց մասածը ներկեցին, վասնզի եկեղեցւոյ ողջակէզներու բոլոր դրամները, ոսկեղէն եւ արծաթեղէն զարդերու հալածները ժողովուրդ եւ դիակները կեղեքելով մեծամեծ հարստութիւն դիզեցին :

Եկեղեցւոյ Աւագ խորանը, որ 950 հատ Օսմ. ոսկիի ծախիւք շինուած էր, մինչեւ Երեքշաբթի երեկոյ, Դեկտ. 19, կը կենար : Սակայն Սիւլէյման Չափու քանի մը հրէշներովը կաշառով բռնկեցուցին եւ աս միջոցին Շարաթ օրէն պահոււածներէն ողջ մնացող Հայ երիտասարդ մը դուրս ցատկեց խորանին ետեւէն որ այսօր ողջ է ու կ'աշխատի :

Երբ չորս օրեր դիակները կը քարչուէին, մնացորդ 10-12,000 խեղճ Հայ ժողովուրդը, մեծ մասամբ այրի եւ որբ, նոյն չորս օրերը խանրուն, ճաճներուն, լէռներուն եւ Տաճկաց տուներուն մէջ ամէն կերպ տառապանքներով եւ նեղութիւններով կ'անցնէին : Թողունք Տաճկաց տուներու մէջ եղածները, որք հազիւ 3-400 անձինք էին, որովհետեւ տան մէջ ըլլալուն կըրնային մի քիչ պատուարուիլ : Սակայն գալով այն հազարաւորաց որք 7-800 վերաւորեալներով, 2-300 որդեձին եւ վիժող կիներով, շատ մը զառամեալ պառաններով, հիւանդներով եւ քանի մը հազար մանկաներով խանրու ախրներուն մէջ, ցետի եւ աղբերու վրայ, ճաճներու հիւսիսներուն եւ սրահներուն մէջ անպատուար եւ անսուղ ըլլալով թալկահար եւ ուժասպառ կը նուաղէին . որով վերաւորը դարման, պառան հանգստարան, մանկտիւն օրօրան, թացերն չորցնելու համար կրակարան, հարսներն ու աղջիկները ծածկոց ու ոտնաման եւ ամենքն ի միասին պահպանման կը կարօտէին : Բայց ո՞ւր է տեսնող, ո՞ւր է լսող, եւ ո՞ւր է օգնութեան հասնող : Այսպէս ամէնքը մնացած էին անտէր անպաշտպան : Գալով կերակուրի մասին, ահա անգութ գազանները իբր ողորմածներ ողորմութիւններ կը բաշխէին : Տես որ միոյն ձեռքը քանի մը ճանկը, միւսին գողը 4-5 ճանկ չափը, այլ ոմն քանի մը քիչէ՛ք լէռներ կամ 3-4 նկանակ կամ պնակ մը ապուր առած կու գան Հայոց կարօտութիւնները յագեցնելու : Ո՛հ, բարբարոսութիւն, երէկ հազարաւորներ յօշոտեցին, անթիւ տուներ աւերեցին իսկ այսօր բարիք կ'ընձեռեն : Բայց աւա՛ղ, որ բարի նպատակաւ չէ՛ վասնզի ոչ թէ Հայուն թշուառութեանը կարեկցելով կ'ընեն, այլ այս միջոցաւ կ'ուզեն թէ Հայուն տառապալից վիճակը դիտել եւ թէ տեսնել թէ ո՞րչափ մարդ ողջ մնացած է, թէ ողջ մնացողներէն ականաւորները Թրքակահնութեան ստիպել եւ թէ անտէր մնացած հարս, աղջիկ եւ մանուկները որսալ, ինչպէս որ ոմանք հրապարակաւ կ'ըսէին . «Այս ազգը փճացաւ, Թրքանալէն զատ ուրիշ ճար չի կրնար գտնուիլ :» Եւ երբ նշմարուէր անտէր մը, յայնժամ գազանն անոր մօտեանալով կարեկցաբար կ'ըսէր . «Հազար ափսո՛ս, ի՞նչու եղանք այսպէս : Քալէ՛ սիրելի՛ս, քալէ՛, գըք մեր տունը կը տանիմ, ալ Հայուն ո՞վ մնաց : Մի՛ վախնար, քու հետք նիւթա՛ն ալ կ'ըլլամ . . .» եւ թերեւս կը յաջողէր ալ : Վասն զի խեղճ կանայք բոլորովին յուսահատած կ'երեւէին կարծելով թէ իրօք մարդ մնացած չէ եւ միայն իրենք մնացած են :

Շարաթ օրէն ի վեր Դեկտ. 16, Հայերէն անոնք, որք պահոււած էին, սկսան երեւան գալ, թէ՛ ջրհորներէն թէ՛ արտաքնոցաց փոսերէն, թէ՛ դիակաց ներքեւէն, եւ թէ՛ այս ու այն

կողմէն որ սոսկ Աստուածային պահպանութեամբ ողջ մնացած էին: Պահուստէ ելլողներուն մէջ եթէ ականաւոր Հայ մը գրտնուէր, բեռնէր որ եւ իցէ միջոցաւ մը զայն կ'սպաննէր: Ահա այս ընտրութեամբ Երկուշաբթի, Դեկտ. 18ին մինչեւ երեկոյ Հայ կը ջարդուէր: Պահուստողներէն մինչեւ Չորեքշաբթի եւ Հինգշաբթի, Դեկտ. 20-21, նոր դուրս ելլող կ'ըլլար. որովհետեւ այս վերջինք դեռ աշխարհի ինչ վիճակի հասնելը չէին կրցած գիտնալ:

Հինգշաբթի, Դեկտ. 21, կառավարութիւնը հրամանս ըրաւ որ 7, 8, 10 անցիք մէկ ըլլալով Կոնստանտնուպոլսու եղած տուներն երթան մինչեւ որ Հայոց խորտակուած դռներն Պեւքեթեի կողմէ շինուի: Ահաւասիկ Հայք մէկ կողմէն իրենց թաղը գալ սկսան ըստ հրամանաց կառավարութեան, միւս կողմէն Պեւքեթեի վարձած Կոնստանտնուպոլսու Հայոց տանց եւ փողոցի դռները շինել, միայն խորտակուած դռներուն մէկ մէկ կարկտան զարնելով եւ ասոնց համար պէտք եղած տախտակներն ալ Հայոց տուներուն մէջ մնացած Բալթի տախտակներն էին որ ատոնք ալ Պեւքեթեի կողմէ գրաւուեցաւ:

Հայք սկսան հետզհետէ տեղաւորուել, ինչպէս որ ըսինք, տուներուն մէջ առանց բան մը գտնելու որ բոլորովին կողոպտուած էր: Այս տարտամ վիճակին մէջ ահա հասաւ Կայսերական զթուրքիւնը եւ իւրաքանչիւր Հայու կը բաշխուէր օրական կէս Բայլի հաց որ 30 փեթէ կը կշուէր, բայց միայն անտէր որք եւ այրիներու:

Տեղւոյս առաջին մինչեւ վերջ տեղի ունեցած թալաններու գոյացման նկատմամբ կառավարութեան կողմէ որ եւ է ձեռնարկ մը չ'եղաւ: Սոսկալի դէպքէն 15 օր վերջ քաղաքս ժամանող Կայսերական թիկնապահներէն Ֆէրիզ Ահմէտ Լութֆի փաշայի անօրէնութեամբ տեղւոյս թիւրք Էլբէջներէն յանձնաժողով մը կազմուեցաւ, որ Հայ տուներուն Բալթի գոյացնելով տէրերուն յանձնեն: Եւ ահա քանի մը օր վերջ գործի սկսան եւ ահա ճամփներէ եւ հիւճիւններէ եւ այլ մի քանի աննշան տեղերէ բաւական գոյք եւ ինչք հանեցին եւ երբոր Գալապոլիսի թաղեցիներէն ուղեցին, անոնք պատասխանեցին թէ. Մեր քով թէեւ Բալթի բաներ շատ կան, բայց անոնք մեր արեան գինը ըլլալուն բնակտոր մը իսկ չենք տար եւ յանձնաժողովը յարգելու համար ահա մեր ինչքերէն իբր շնորհ մաս մը կուտանք: Այս ըսելով կարգ մը ծակծկած ամաններ, ցնցոտի լաթեր եւ անկողիններ կուտան յանձնաժողովին եւ կառավարութիւնը զանոնք նոյն յանդուգն պատասխանին հետ ընդունեց: Այսպէս Թուրքերէն ոմանց աները հին լաթ եւ ծակ աման չի մնաց, ամենն ալ իբրեւ Հայոց ամբողջ կողոպտուած գանուած ահա յանձնաժողովը կը ծանուցանէ թէ. «Ո՛վ

որ կողոպտուած է թող եկեղեցւոյ գաւիթը դայ իր ստացուածքն ճանչնալով առնելու: Ապա բոլոր ժողովուածները Ազգային Առաջնորդարանն բերուելով Հայ կանայք հազարաւորներով գնացին որ իրենց ինչքը առնեն: Ահա յանձնաժողովը մաս մը բաներ եկեղեցւոյ գաւիթը կը դիզէ եւ որոշեալ մունետիկներէն մին կտոր մը բան կը վերցնէ եւ բարձրացնելով կը պոռայ. «Այս ո՞րու է:» Յանկարծ տես որ կանանց մեծ բազմութիւն մը կը մօտենան նոյն մունետիկին եւ կ'սկսին նոյն առարկան ճանչնալու փորձեր ընել, որուն մէկ երկու տասնեակ տէրեր կը տեսնուին, այս պատճառաւ կ'սկսին զիրար մրմշակել եւ իրարու ձեռքէ քաշել եւ մինչեւ իսկ բանակսիւ եւ ծեծ տեղի կ'ունենայ: Այս ծայրահեղ իրարանցման վրայ, տես որ անգութ զինուորացի մըտաքակները կը հասնին խեղճ կանանց գլխուն, որով ամէնքն ալ թողած յետս կը մղուին: Այս միջոցին շատ մը ուժասպառ կանայք կ'զգեսանին եւ ոտնակոխ կ'ըլլան: Այս սրտածմլիկ տեսարանն յանձնաժողովոյ անգամոց մեծ հաճոյք մը պատճառելով ձեռք ձեռքի զարկած գահգահելով կը խնդան իբր թէ թատրոնի մը տեսարանը զիտելու նստած են: Յետոյ յանձնաժողովոյ անգամներու հրամանաւ մտրակեալները նորէն կը կանչուին: Այս անգամ կը պատուիրեն թէ. Ո՛վ որ նախայարձակպէս երդում ընելով ձեռքը Աւետարանին վրայ դնէ, առարկան անոր կը տրուի: Խեղճ կանայք կարօտութենէն ամեն բան մոռցած մինչեւ իսկ երգման նշանակութիւնը, յառաջ կուգան եւ յաջողակները երգմամբ Աւետարանի վրայ ձեռք դնելով բանի մը կը տիրանան:

Ոմանք, անպատկառ կանայք, Ժանապարհները կաշառելով անոնց թոյլտուութեամբ կը յաջողին սուտը իրաւէն առաջ անցունել, այսպէս նաեւ յանձնաժողովոյ անգամներն կը կաշառուին: Ո՛հ, կաշառակեր Թուրքաց կառավարութիւն, որ ամէն տեղ շուտ մը կաշառին ճամբան կը գտնես: Ափսո՛ս եւ եղո՛ւկ Եւրոպական հզօր տէրութեանց, որ քեզմէ խաբուելով քու կախարդութիւններէդ զինովցած տակաւին կը ներեն որ բարբարոսական զերիշխանութիւնդ վարես: Այսու ամենայնիւ Եւրոպայի լուրթեամբ եւ անտարբերութեամբ զօրաւոր է հրէշական իշխանութիւնդ:

Այսպէս Հայոց թալանը բաժնուեցաւ ըսին, սակայն ահարկու սուտ. վասնզի հաւաքուածը Հայոց ընչից հազիւ մէկ երեսուներորդն էր եւ բաժնուելով հազիւ մէկ մի Հայու բան մը բաժին կ'իջնար, ան ալ Թուրքաց պէտք չեղած բաները:

Համառօտ հաշիւով մը Հայոց ստացուածոց մասին կրնանք զաղափար մը կազմել: Հայք 5,000 տունէ կը բաղկանային, ամէն բանէ զատ մէկ մի տուն մէկ Խալի, մէկ Կիւ եւ երկու կարպիտ ունենար, 20,000 կտոր փոսք կ'ընէր: Ահա այս թուոյն տեղ

միայն 400 պատուած ցնցոտիներ կը տեսնուին . հետեւաբար այս համեմատութենէն ժողովուած եւ բաժնուած բաներուն ընթերցողը կրնայ գաղափար մը կազմել : Վերջապէս եղած դէպքերը մի բստ միտջէ եթէ գրելու ըլլանք գրելչ չի դիմանար եւ թանաք չի բաւեր :

ԴԵՊՐԻՆ ՄԷՋ ԿՈՏՈՐՈՒՂ ԿՐՕՆԱԿԱՆՍԱՅ ԱՆՈՒՍՆՅՑ ՅՈՒՅԱԿԸ

- Տը. Յովնաննէս Աւագ Բնից. Ղազանճեան Առաջնորդական փոխնորդ.
- " Խաչատուր Բնից. Տը. Կարապետեան անդամ Կրօնկն. ժողովոյց
- " Աբրահամ " Արեւեան " " "
- " Վահան (Կնոյ) Տը. Գրիգորեան " " "
- " Գէորգ " Այվազեան " " "
- " Խորէն " Վարդապետեան " " "
- " Յակոբ " Ճիպինցի պանդուխտ

Պատ. Յակոբ Ապուհայաթեան Գարողիչ-հովիւ Հայ-բողոքականց  
" *Մայրոց ԿՈՏՈՐՈՒՂ ԵՐԵՒԱՅԻ ԱՆՋԱՆՅ ԱՆՈՒՆԵՐՈՒՆ ՅՈՒՅԱԿԸ*

- Մհ. Սաղաթիէլ էֆ. ծերունի Անդամ Երեսփոխանկն. ժողովոյց
- Կրպետ էֆ. Մհ. Սաղաթիէլեան " Իրարէի եւ " "
- Օհան աղա Ճինճավաթեան " " " "
- Մարգար աղա Պէրէճիբլեան " Պէրէճիբլի եւ " "
- Յարութիւն էֆ. Սիւմբուկճեան " " " "
- Պաղտասար էֆ. Մաղաքեան " Թէճարէլի " "
- Աբրահամ էֆ. Տատեան " Երեսփոխանական ժողովոյց եւ քարտուղար Մահապետի
- Գրիգոր էֆ. Մեսրոպեան Անդամ Երեսփոխանական ժողովոյց եւ Մահապետ Պաշի եւ Փաստաբան.
- Սարգիս էֆ. Սապաղ " Հայ-Վաթոյիկ Երեսփ. ժողովոյց եւ երեսեղի փաստաբան
- Գէորգ էֆ. Աբրահամեան Հայ-Բողոք. Անդամ Եկեղեցական խորհրդոյց եւ բժիշկ
- Յարութիւն էֆ. Աբրահամեան Հայ-Բողոք. Դեղագործ Պէրէճիբլի
- Մեղքոն էֆ. Օհանեան Հայ-Լուսաւորչական " "
- Գէորգ էֆ. Խշվաճեան Հայ-Բողոք. Գործակատար եւ գրագիր Գիւրքճի գատէ Մահմուտ Նէտիմի
- Գէորգ էֆ. Երանոսեան " Երեսեղի վաճառական եւ անդամ թաղական խորհրդոյց
- Աւետիս էֆ. Շատարեան " Անդամ խորհրդականաց
- Կարապետ էֆ. Բումեան " Երեսեղի ծերունի
- Յովնաննէս էֆ. Էթմէքճիպաշեան Ատենապետ Գաղաքական եւ Երեսփոխանական ժողովոյց
- Գէորգ էֆ. Քիլէճեան Անդամ Երեսփոխանական ժողովոյց

- Մհ. Գարբիէլ էֆ. Կէմճեան Անդամ Երեսփ. ժողովոյց
- Գերովրէ " Տը. Գրիգորեան " " "
- Յարութիւն " Արծիւեան " " "
- Պողոս " Չալեան " " "
- Յակոբ " Չոլաղեան " " "
- Գէորգ " Շամլիեան " " "
- Գէորգ " Շահինեան " " "
- Մհ. Կարապետ " Եաղլըճեան " " "
- Աբրահամ " Պապախանեան " " "
- Սարգիս " Մը. Յակոբեան գրաւաճառ եւ " " "
- Գէորգ " Պէշլեան վաճառական եւ " " "
- Մհ. Սարգիս " Գաղթալեան " " "
- Մհ. Յովնաննէս " Եաղլըճեան " " "
- Կարապետ " Գախթալեան Երեսեղի հարուստ վաճառական
- Մկրտիչ " Եաղլըճեան " " "
- Մհ. Յակոբ " Թուլուղեան " " "
- Յակոբ " Գ. Թուլուղեան " " "
- Մծնաֆար " Մը. Յակոբեան ընտիր դասատու
- Սարգիս " Չպըղեան Հայ-Բողոք. անդամ խորհրդական
- Գէորգ " Նաճար Երեսեղի Հայ-Բողոքական
- Գէորգ էֆ. Ղազանճի Սարգիսեան " անդամ Ուսումն. խորհ.
- Գէորգ էֆ. Նալպանտեան
- Յովնաննէս աղա Փանոսեան գործակատար Կիւլպէնկեանց
- Ճանիկ աղա Կիւրինցի գործակատար Վէրան-Շէնիբ Իպրահիմ փա.
- Մհ. Կարապետ էֆ. Իսահան Երեսեղի հարուստ [չայլ
- Աբրահամ էֆ. Պէրպէրեան վաճառական,
- Մհ. Գէորգ էֆ. Սաղաթիէլեան հարուստ մեծատուն
- Մհ. Յակոբ " " " "
- Գրիգոր Տը. Յովնաննէսեան դասատու
- Կարապետ էֆ. Պէրէճիբլեան գրագիր հեռադրատան
- Յակոբ էֆ. Թիւֆէնկճեան Մուխթար
- Յովնաննէս էֆ. Պատմաճի Մհ. Պաղտասարեան Երեսեղի ծերունի

ՎԵՐՋ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԿՈՏՈՐԱՄԵՆ ԵՂԵՍԻՈՅ

Ո՛վ տիրահնամ մայրաբաղաբ, դու մեր փառք, պարծանքն էիր,  
Բազմամիւ նահատակաց մատուցներ կը պահէիր,  
Ինքնանկար Աստուածածնի անուամբ տաճար ունէիր,  
Սոցա յարգանք, պատիւ ու փառք տուող մարդիկ չի մնաց :

Ո՛վ ցանկալի Եղեսիայ, Քրիստոնէութեան հանքն էիր,  
Բազմամիւ ժողովրդով հնութեան աղբիւր էիր,  
Գոյութեան իսկ արժանի պծնեալ տաճար ունէիր  
Արդ ո՛չ տաճար, ո՛չ ժողովուրդ, բարոզիչ ալ չի մնաց :

Հազար ախոս՝ Եղեսիոյ, կորսնցուց ժողովուրդը,  
Միամիտ և շերմուանդ գառնուկի նման հօտը,  
Ձենեցին ոչխարի պէս, մինչև փոքր մանուկը,  
Ո՛չ երկնքէն եւ ո՛չ երկրէն տնանող լսող չի մնաց :

Երբ մեր անգութ թշնամիք յանկարծ յարձակում բրին,  
Խեղճուկ և տկար Հայեր սասած ապշած մնացին,  
Ոմանք երկիւղէն փախչելով ինքնին ջրհոր ձգեցին,  
Շատեր կ'ողբան, կը պուան, ճարի հասնող չի մնաց :

Խեղճ ժողովրդին մեծ մասը, պատապարուելու համար,  
Դիմեցին եկեղեցին կեանք ազատելու համար,  
Գոնէ երկիրքէն օգնութիւն յուսալ խնդրելու համար,  
Սակայն հրոյ ճարակ եղան, ազատիչ մը չի մնաց :

Առանց հովուի հօտի պէս խեղճ Հայեր մոլորեցան,  
Քոյր եղբայր իրարու հետ ձեռք ձեռքի բռնած կ'երթան,  
Ծնողք մանչուկներ զրկեցին կունակնուն տղայ բեռցան,  
Դիզուեցան եկեղեցին, թռչնոյ տեղ մը չի մնաց :

Երբ սգաբեր արշալոյսը տիրեց բաղաբնուս վրայ,  
Եկան մեր ծանօթ թշնամիք եկեղեցիներու վրայ,  
Ալ անատեն ճար չի մնաց, կ'ուզես լաց, կ'ուզես գոռայ,  
Սա աղէտից առաջքն առնող առաջնորդ մը չի մնաց :

Սուր եւ կացին նաեւ հրացան, դաշոյն ալ կար ձեռքերնին,  
Մեծ հոյակապ եկեղեցոյն եօթր դուռը պաշարեցին,  
Կոտրեցին Աւագ դուռը ներսը կրակ ձգեցին,  
Իտրորեալ բոցէն փախչելու երբեք դուռ մը չի մնաց :

Մարդկանց բերան, ճարտար լեզու չէ կարող զէպը պատմել,  
Մարտափելի աղաղակներն ականջը չէ կարող լսել,  
Փոքր մանկանց լալու ձայնըն խիղճ մը չէ կարող կրել,  
Այս ահուկի պատմութիւնը լսողաց սիրտ չի մնաց :

Ճարահատեալ օրիորդներ չեն զխտեր ո՞րու դիմեն,  
Ծնողաց գիրկը կ'իյնան, պարանոցէն կը գրկեն,  
Մանուկներ, երախաներ հայրերուն ճար կը ձգեն,  
Սակայն եկաւ մահը հասաւ, փրկութեան յոյս չի մնաց :

Երկինք իւր հրեշտակներով ամբողջովին լուս եղաւ,  
Երկիր իւր իշխաններով բոլորովին կոյր եղաւ,  
Կառավարիչ իւր զօրքերով Հայերու զահիճ եղաւ,  
Անբուժելի վէրք ստացանք, ճարտար բուժիչ չի մնաց :

Այրեցին եկեղեցին իւր ամբողջ ժողովուրդով,  
Հուր ու բոց բորբոքեցին քարեկղի կրակով,  
Աւար առին սուրբ անօթներ բազմամիւ մատուցներով,  
Ի՞նչ կ'ընէք, ո՞ւր կը տանիք, ըսող իշխան չի մնաց :

Ոսկեգօծ արծաթեղէններ, ճարտարագործ կանթեղներ,  
Ականակուռ մարգարտագարդ Յիսուսաւանդ սուրբ խաչեր,  
Հայրապետական զգեստներ, բահանայական թագեր,  
Գրքեր, Շարականներ տարին, Տօնացոյց մը չի մնաց :

Ողջ մնացող յրդի կանայք յեկեղեցոյ զաւակ ծնան,  
Ծանօթ զէպրէն երկիւղ կրելով բնականէն պակաս ծնան,  
Նորածին երախաներու հագցունելու լամ չի մնաց,  
Մկրտութեան մատակարար Քահանայ մը չի մնաց :

Խորէն Եպիսկոպոս արդէն պաշտօնէ հրաժարեալ էր,  
Ունէինք բահանաներ թուով իսկ ուժը հատ էր,  
Վեց հատը սպաննեցին, երկուքը վերաւորեալ էր,  
Յիսուսի հօտն արածող քաջ հովիւ մը չի մնաց :

Տէր Յովնանէս, Տէր Գէորգ, Տէր Վահանն էին խուցը,  
Արեւան Տէր Արքայաճ իւր դրացիին տունը,  
Ծերունի Տէր Խաչատուր իւր փեսայի տունը,  
Իսկ նորընծայ Տէր Խորէն իրեն հօրեղբորտունը,  
Սպաննուեցան ժողովրդներով, ժամակոչ մը չի մնաց :

Բողոքականաց Պատուելի սիրուն, անունն Ապուհայամ,  
Բժիշկ Գէորգի տանը մէջ ընկեր ունէր տասներկու հատ,  
Ընկերներովը զոհուեցաւ, զաւակներ որք թողուց վեց հատ,  
Կուսակրօն Միս Շամիկի մխիթարիչ մը չի մնաց :

Հատ ժողովուրդ առնելու մէջ իրեն ծնողաց առաջ,  
Ընտանեաց եւ զաւակաց եւ աղջկանց աչքին առաջ,  
Կացինով չարաչար մեռան կտրեցին քիթ ու ականջ,  
Չաւակներէ կարօտ առնելու ժամանակ ալ չի մնաց :

Նոյն պահուն բոլոր ընտանիք բռնեցին գերի տարին,  
Տուներու մէջ ինչ որ գտան բոլորը աւար տարին,  
Ընտանեկան բոլոր գոյքեր ուղարկու բեռցած վերուցին,  
Ոչիլի կերակուր եղանք, լամ փոխելու շոր չի մնաց :

Թէ՛ էշ, Թէ՛ ձի, եզ եւ ոչխար, բոլորը առին տարին,  
Կատուին, Վե՛ւ՛ւր քաշ, ըսելով զարկին, հաւերն ալ տարին,  
Խեղճ մանուկներ օրիորդներ, մերկ ու բոկտոն թողուցին,  
Ամեն բանի կարօտ եղանք, խօսող հաւ մը չի մնաց :

Փողոցները կտրիճներու դիակներով լեցուցին,  
Ոտքերնուն կապ կապելով երեսն ի վար քաշեցին,  
Տարին պարսպի վրայ խորհրապը լեցուցին,  
Եկեղեցոյ զաւթին մէջ գերեզմանի տեղ չի մնաց :

Վանքի դիմաց պարսպի տակ բարայրը շատ լեցուցին,  
Երկու շանմարան նորէն կամուրջի վերայ բացին,  
Դիակներ շատ ըլլալուն լայն ու ընդարձակ պեղեցին,  
Դաշեցին ու լեցուցին, դարձեալ մերին տեղ չի մնաց :

Կրկին տեղ մը պատրաստելու Լեւոն-Դրան կից փորեցին,  
Նոյն տեղն ալ չի բաւելով ժամուն գաւիթը դիմեցին,  
Գոտին երկու տեղ փորեցին կիզեալ դիակօր լեցուցին,  
Վրան ալ կիրով լեցուցին, դիմանալու սիրտ չի մնաց :

Հատ բաներ ունիմ գրելու, ի՞նչ ընեմ, ժամանակ չ'ունիմ,  
Ա՛խ, ըսելով օրեր կ'անցնեմ առանց արցունքի աչք չ'ունիմ,  
Երկու եղբորս կարօտէն զիշեր կ'անցնի բուն չ'ունիմ:  
Ռատել խնելը մոռնալուս գլուխս խնել չի մնաց :

Անմեղ արիւն թափելով մեռնողներն ազատեցան,  
Մնացողներէն կարգ մը մարդ կրօնքը փոխելով Թիւրքացան,  
Հովիւ, եկեղեցի, իշխան, դպրոց, չի կայ որ խրատ տան:  
Վերջապէս Եղեսիոյ Հայերուն տէր տիրական չի մնաց :



Այն ապերախտ Ռուսաց Չարը որ էր վաղիւ մեզ դրացի  
Իժի պէս ականջներ գոցեց չ'ուզեց լսել Հայոց ձայնի,  
Քանզի եւ նա կամակից էր արիւնարբու չար գազանին,  
Սոցա զանից անամենայ չ'երգող այրի չի մնաց:

Անզլիական զանին բազմող Հայկազն Սազունին պառաւ,  
Իւր հեռատես աչքերն գոցեց բոլորովին մեզ մուռաց:  
Ներս աշխարհի հոսած կամն, նաեւ մեղրը արիւն դարձաւ:  
Համեստ կանայք այրի եղան, ազնիւ զաւակներ որք մնաց,

Ո՛վ երկրասէր, աշխարհասէր եւ շահասէր իշխաններ,  
Մի՛ կարծէք թէ հաւասար են երկնային վարձք ձեր եւ մեր,  
Թէեւ այսօր մեր ապրուստն են ձեր սեղանի փշրանքներ,  
Սակայն վաղիւ Արբանամի գոզն ձեզ տեղ չի մնաց:

Թէ կը սիրէք աշխարհի փառք, ձեր Աստուածը այն թող ըլլայ,  
Թէ չէք սիրեր խաչի պատիւ, ձեր Յշնամին այն թող ըլլայ:  
Թէ չէք օգնէր տնանկ Հայոց, անոնց վիշտը թող ձեզ ըլլայ,  
Իրաւասէր, արդարասէր վեհապետ մը չի մնաց:

Ունիմք երեք Կամողիկոս, միով մեզ չ'այցելեցին,  
Նաեւ երկու Պատրիարքունք, մեզ մտքերնին չի բերին,  
Եղեսիոյ խեղճ ժողովուրդն առանց հովուի թողուցին,  
Չեմ գիտեր, Ամենակարող երկնից Աստուածք ո՞ւր մնաց,

Ամէն ինչքէ, ամէն գոյքէ կարտով մնայնէս գատ,  
Ընտանեաց ծանկագին զարդեր աւարի երծալէն գատ,  
Մտուկնուս եւ քսակնուս պատրաստի դրամէն գատ,  
Գեղեցիկ աղջիկնիս ալ տարին, պատիւնիս ալ չի մնաց:

Ես գիտեմ, Ո՛վ Տէր Աստուած իմ, մեղքերս խիստ շատցաւ,  
Պատուէրներդ չի պահելուս . . . յանցանքներս աւելցաւ,  
Անօրէնութեան գործերս զլխէս ի վեր բարձրացաւ,  
Ասոր համար ինձ բարկացար, ըսելիքս չի մնաց:

Հաւատոյ հօր, Արբանամին Աստուածը, Հայր ողորմած,  
Իսահակ եղեւ օրինակ խորրդոյդ Որդիդ ԳԹԱԾ,  
Նաեւ Յակոբ Նահապետին, ասոնց սիրոյն Հոգիդ Աստուած,  
Զմեզ Յշնամոյն մի՛ մատներ, բանզի անոնց զուժ չի մնաց:

Քու առաջդ երես ի վայր իյնալով ոտքդ զրկեմ,  
Մեղաներ հրատարակելով զարշապարդ համբուրեմ,  
Ինձմէ երես մի՛ դարձներ, զի ես Քո ձեռագործն եմ,  
Յաւիտեան ինձ մի՛ բարկանար, զի բաց ի Քէն տէր չի մնաց:

Դու գիտես որ ես Քեզմէ չի խնդրած ստեղծեցիր,  
Ոչինչ եւ անտեղեակ էի, չի բողբոջած ինձ լսեցիր,  
Հրեշտակներէն աւելի զիս սիրելով մեծցուցիր,  
Հապա ի՞նչու զիս կը մոռնաս, ցաւս հոգող ալ ո՞վ մնաց:

Անառակ որդոյն դառնալը տեսար, դիմաւորեցիր,  
Պարանոցէն զրկելով շուտով զիք համբուրեցիր,  
Տարիներով գործած մեղքին անմիջապէս ներեցիր,  
Ինձ ալ օգնութեան եկուր, յոգնած եմ, շունչս չի մնաց:

Գրեցի աղի արտասուօր, միայն հազար ուժ հարիւրի,  
Դարձեալ նաեւ իննսուն հինգի, թուին խաչեալ Յիսուս Փրկչի,  
Եւ սկիզբն ձմռան ամսոյն, քսան եւ չորս Դեկտեմբերի,  
Անաչառ դատ սպասելով, աչքս դէպ ի երկինք մնաց:

Բացում է Եղեմ Կարամանլի



հարցում

Հարապետ սգախոր եմ մականուձբ քիրլէծեան,  
Անմիխթար կուլամ կ'ողբամ, մեղուցելուս կուզեմ  
դարման.  
Կը փնտռեմ չ'եմ կրնար գտնել եղբայրներուս  
իսկ նման.



7515

